Վ. Մ. ՄՈԼՈՏՈՎԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ им. В. М. МОЛОТОВА

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

НАУЧНЫЕ ТРУДЫ

ՀԱՏՈՐ
ТОМ
49

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

ԵՐԵՎԱՆ 1955 ЕРЕВАН

Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետական համալսարան
Ереванский государственный университет им. В. М. Молотова

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

★

НАУЧНЫЕ ТРУДЫ

ՀԱՏՈՐ
ТОМ
49

Բիոլոգիական գիտությունների սերիա
ՊՐԱԿ 5

Серия биологических наук
ВЫПУСК 5

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

ԵՐԵՎԱՆ ※ 1955 ※ ЕРЕВАН

Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետ. համալսարանի գիտ. աշխատությունններ
Научные труды Ереванского государственного университета им. В. М. Молотова
49 1955

Г. Г. Батикян и Д. П. Чолахян

ВЛИЯНИЕ РАЗНЫХ СПОСОБОВ ОПЫЛЕНИЯ НА ПРОЦЕСС ОПЛОДОТВОРЕНИЯ И ЖИЗНЕННОСТЬ РАСТЕНИЙ ТОМАТА

Материалистическое понимание жизненности создает большие возможности для управления и повышения продуктивности сельскохозяйственных растений.

Жизненность организмов создается в результате противоречивости процесса оплодотворения, особенно усиливающегося при ассимиляции сравнительно отличающихся друг от друга половых элементов.

Исследования показывают, что процесс оплодотворения представляет собой не только взаимную ассимиляцию яйцеклетки и спермы, но и одновременное участие в нем всей воспроизводительной системы, тканей пестика, рыльца, а также того многочисленного количества пыльцы, которое, участвуя в процессе оплодотворения, влияет как на свойства и признаки формирующегося зародыша, так и на жизненность полученного организма.

Опыты ряда исследователей (Жукова С. В., Беркута О. Д., Дука С. Х. и Соколовского И. С., Элленгорна Я. Е. и Светозаровой В. В., Симонова И. Н., Лесика Ф. И., Лобанова Г. А., Орлянской Л. П. и Полякова П. И., Полякова И. М., Саркисяна Н. С.) показывают, что смесь пыльцы разных сортов положительно влияет на процесс оплодотворения и что пыльцевые зерна в данном случае оказывают воздействие как друг на друга, так и на рыльце и ткани пестика, тем самым изменяя тип обмена веществ этих тканей и соответствующие условия, в которых происходит весь процесс оплодотворения. Создаются различные условия для сливающихся половых эле-

ментов, которые ведут к большей противоречивости процесса оплодотворения и к подъему жизненного импульса полученного потомства.

Накопленные в области биологии оплодотворения растений данные показывают, что самооплодотворение самоопыляющихся растений, в условиях изоляции, ведет к депрессии и понижению жизненности полученного потомства, тогда как внутрисортовое скрещивание ведет к большей продуктивности и жизненности полученного потомства (Лысенко Т. Д. и Долгушин Д. А., Муравьев П. А., Плесецкий П. Ф. и Добровицкая С. П., Поташникова Б. Г., Цинда К. И., Львова П. И., Савченко Н. А., Фейцаренко А. И., Полунин Я. Я., Мухин Н. Д., Брежнев Д. Д., Кучумов П. В., Арутюнова Л. Г., Микаилов М. А., Шубин И. Д.).

Наши опыты проводились в течение 1951—53 гг. на сортах томата Анаит, Микадо, Штамбовый № 31, Золотая королева, Красный сливовидный, Красный грушевидный, Эрлиана, Нор-Кохп, Маяк, Марглоб. В работах по изучению одной комбинации принимала участие также дипломница Н. Гаспарян.

Мы изучали влияние разных вариантов опыления на процесс оплодотворения, а также на жизненность полученных растений. Опыты проводились в следующих вариантах:

1) Внутрисортовое скрещивание без кастрации собственных тычинок;

2) Внутрисортовое скрещивание с кастрацией собственных тычинок;

3) Изолированное самоопыление;

4) Гибридизация;

5) Опыление смесью пыльцы разных сортов томата с кастрацией собственных тычинок цветков.

Как показывают предварительно полученные данные, разные варианты опыления по-разному повлияли в год опыления на плодообразование, а также на среднее количество семян в одном плоде (таблица 1, 2).

Так, например, у сорта Анаит, при свободном опылении плодообразование составляет 35%, количество семян в одном плоде—72, при внутрисортовом скрещивании—соответственно 40%, 89; при изолированном самоопылении—10%, 66 (таб-

лица 1). У сорта Золотая королева плодообразование при свободном опылении составляет 70%, количество семян в одном плоде—85, при внутрисортовом скрещивании—соответственно 90%, 91, а при изолированном самоопылении—10%, 80. У сорта Штамбовый № 31 по тем же вариантам соответственно получаются 65%, 105; 80%, 106; 40%, 101 (таблица 1). Примерно такие же данные получились у сортов Микадо, Красный сливовидный и Красный грушевидный.

Таблица 1

Влияние разных вариантов опыления на образование плодов и на среднее количество семян в одном плоде томата. 1951 г.

№№ п/п	Сорта	Варианты	% образования плодов	Количество семян в одном плоде
1	Анаит	Свободное опыление	35	72
		Внутрисортовое скрещивание	40	89
		Изолированное самоопыление	10	66
2	Микадо	Свободное опыление	55	125
		Внутрисортовое скрещивание	60	134
		Изолированное самоопыление	0	—
3	Штамбовый № 31	Свободное опыление	65	105
		Внутрисортовое скрещивание	80	106
		Изолированное самоопыление	40	101
4	Золотая королева	Свободное опыление	70	85
		Внутрисортовое скрещивание	90	91
		Изолированное самоопыление	10	80
5	Красный сливовидный	Свободное опыление	50	58
		Внутрисортовое скрещивание	60	66
		Изолированное самоопыление	40	50
6	Красный грушевидный	Свободное опыление	70	43
		Внутрисортовое скрещивание	70	45
		Изолированное самоопыление	40	42

Интересные данные получаются при сравнении количества семян в одном плоде при варианте внутрисортового скрещивания с кастрацией и без кастрации собственных тычинок. Так, например, у сорта Анаит, при внутрисортовом скрещивании с

Таблица 2

Влияние разных вариантов опыления на образование количества семян в одном плоде томата. 1953 г.

№№ п/п	Сорта	Варианты	Среднее количество семян в одном плоде
1	Анаит	Внутрисортовое скрещивание с кастрацией	113
		Внутрисортовое скрещивание без кастрации	334
2	Эрлиана	Внутрисортовое скрещивание с кастрацией	192
		Внутрисортовое скрещивание без кастрации	313
3	Нор-Кохп	Внутрисортовое скрещивание с кастрацией	118
		Внутрисортовое скрещивание без кастрации	172
4	Маяк	Внутрисортовое скрещивание с кастрацией	97
		Внутрисортовое скрещивание без кастрации	143
5	Марглоб	♀ Марглоб × ♂ Красный сливовидный	61
6	Золотая королева	♀ Марглоб × ♂ Золотая королева	90
7	Красный сливовидный	♀ Марглоб × ♂ (Золотая королева + + Красный сливовидный)	195
8	Маяк	♀ Маяк × ♂ Болгарский	96
9	Болгарский	♀ Маяк × ♂ Нор-Кохп	91
10	Нор-Кохп	♀ Маяк × ♂ (Болгарский + Нор-Кохп)	103

кастрацией, среднее количество семян составляет 113, при внутрисортовом скрещивании без кастрации получается в одном плоде 334 семян; у сорта Эрлиана по тем же вариантам—192, 313; у сорта Маяк—97, 143 и т. д. (таблица 2). Разница наблюдается также при сравнении количества семян в плодах, полученных от гибридизации и опыления кастрированных цветков томата смесью пыльцы разных сортов. Так, например, в

комбинации ♀ Марглоб × ♂ Красный сливовидный количество семян составляет 61, в комбинации ♀ Марглоб × ♂ Золотая королева—90, а в комбинации ♀ Марглоб × ♂ Красный сливовидный + Золотая королева—195 (таблица 2). Примерно такие же данные получились у сорта Маяк при гибридизации и опылении смесью пыльцы разных сортов.

Различны результаты и при исследовании жизненности растений томата, полученных от разных вариантов опыления. Так, например, у сорта Анаит, в варианте внутрисортового скрещивания, высота полученных растений в среднем доходит до 116,0 см, количество плодов одного растения—47, вес плодов одного растения составляет 2131 гр, а вес одного плода—120—150 гр; в варианте изолированного самоопыления соответственно получаются 78,3 см, 22, 1817 гр, 100—120 гр (таблица 3). У сорта Штамбовый № 31 в варианте внутрисортового скрещивания средняя высота одного растения доходит до 42,5 см, количество плодов одного растения—34, вес плодов одного растения—2858 гр, вес одного плода в среднем—150—190 гр; в варианте изолированного самоопыления соответственно получаются 39,1 см, 31,2715 гр, 100—180 гр. Примерно такие же данные получились и у сортов Микадо, Золотая королева, Красный сливовидный, Красный грушевидный (таблица 3).

Анализы запасных веществ в семенах полученных плодов показывают, что различные варианты опыления также по-разному повлияли на количество жиров, белков, редуцирующих сахаров, на клетчатку и золу. Так, например, у сорта Штамбовый № 31 в варианте внутрисортового скрещивания жиры составляют 0,7799 гр, белки—0,4991 гр, редуцирующие сахара—0,0967 гр, клетчатка—0,3725 гр, зола—0,0723 гр, в варианте изолированного самоопыления соответственно получаются 0,7442 гр, 0,4544 гр, 0,0995 гр, 0,3365 гр, 0,0551 гр. Примерно такие же результаты получились у сортов Золотая королева и Красный сливовидный (таблица 4).

Анализируя полученные данные, можно придти к следующим выводам:

1) Различные варианты опыления по-разному влияют на процесс оплодотворения, что и выражается в разном проценте плодообразования в год опыления и в количестве семян, обра-

Таблица 3

Влияние разных вариантов опыления на жизненность растений томата. 1952 г.

№№ п/п	Сорта	Варианты опыления в 1951 г.	Высота растения в см	Количество плодов	Вес плодов в гр. на 1 растении	Вес одного плода в гр.
1	Анаит	Внутрисортовое скрещивание	116,0	47	2131	120—150
		Изолированное самоопыление	78,3	22	1817	100—120
2	Микадо	Внутрисортовое скрещивание	74,0	22	2414	120—210
		Свободное опыление	70,0	19	2100	105—140
3	Штамбовый № 31	Внутрисортовое скрещивание	42,5	34	2858	150—190
		Изолированное самоопыление	39,1	31	2715	100—180
4	Золотая королева	Внутрисортовое скрещивание	93,9	34	2742	75—110
		Изолированное самоопыление	91,0	22	1961	65—95
5	Красный сливовидный	Внутрисортовое скрещивание	97,6	171	2104	10—15
		Изолированное самоопыление	97,1	167	2076	10—13
6	Красный грушевидный	Внутрисортовое скрещивание	120	212	1507	10—12
		Изолированное самоопыление	109	157	1255	10—18

зующихся в одном плоде. В варианте внутрисортового скрещивания получается больше плодов, а также больше семян в одном плоде по сравнению с вариантом изолированного самоопыления. Количество семян полученных плодов, при опылении цветков томата смесью пыльцы разных сортов, также больше по сравнению с количеством семян плодов, полученных при обыкновенной гибридизации. Следовательно, при смеси пыльцы разных сортов полученная относительная разнородность среды,

Таблица 4

Влияние разных вариантов опыления на количество запасных веществ в семенах томата. 1952 г.

Сорта и варианты опыления в 1951 г.	Количество запасных веществ в семенах				
	Жиры	Белки	Редуцирующие сахара	Клетчатка	Зола
Штамбовый № 31					
Внутрисортовое скрещивание	0,7799	0,4991	0,0967	0,3725	0,0723
Изолированное самоопыление	0,7442	0,4544	0,0995	0,3365	0,0551
Золотая королева					
Внутрисортовое скрещивание	0,5786	0,4694	0,0937	0,2971	0,0689
Изолированное самоопыление	0,3869	0.3456	0,1157	0,2385	0,0451
Красный грушевидный					
Внутрисортовое скрещивание	0.8685	0,5726	0,0972	0,4798	0,0831
Изолированное самоопыление	0,6996	0,5137	0,1079	0,3461	0,0504

а также пыльцевых зерен положительно влияет на процесс оплодотворения;

2) Растения, полученные от внутрисортового скрещивания. по сравнению с растениями, полученными от изолированного самоопыления, более жизненны, отличаются большой продуктивностью, а также высоким весом одного плода. Одновременно изменяется количество запасных веществ, белков, жиров, редуцирующих сахаров в семенах полученных плодов. Таким образом, внутрисортовое скрещивание положительно влияет как на процесс оплодотворения в год опыления, так и на жизненность полученного потомства.

Кафедра генетики и дарвинизма

Հ. Գ. Բատիկյան և Դ. Պ. Չոլախյան

ՓՈՇՈՏՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՁԵՎԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՈՄԱՏԻ ԲԵՂՄՆԱՎՈՐՄԱՆ ՊՐՈՑԵՍԻ ԵՎ ԲՈՒՅՍԵՐԻ ԿԵՆՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ամփոփում

Փորձերը կատարվել են 1951—53 թթ. տոմատի Անահիտ, Միկադո, Շտամբովի № 31, Զոլոտայա կորոլևա, Կրասնի սլիվովիդնի, Կրասնի գրուշևիդնի, Էռլիանա, Նոր-Կողբ, Մայակ, Մարգլոբ սորտերի վրա։

Մեր նպատակն է եղել ուսումնասիրել փոշոտման տարբեր վարիանտների ազդեցությունը բեղմնավորման պրոցեսի և ստացվող սերնդի կենսականության վրա։ Փոշոտման վարիանտներն էին. 1) ներսորտային խաչաձևում ծաղիկների սեփական առէջների կաստրացիայից հետո, 2) ներսորտային խաչաձևում առանց ծաղիկների սեփական առէջների կաստրացիայի, 3) մեկուսացված ինքնափոշոտում, 4) հիբրիդիզացիա, 5) փոշոտում տոմատի տարբեր սորտերի ծաղկափոշիների խառնուրդով։

Ինչպես ցույց են տալիս անալիզների տվյալները (աղյուսակ 1, 2) փոշոտման տարբեր վարիանտները (փոշոտման տարում) տարբեր ձևով են ազդել ինչպես պտղակալման տոկոսի, այնպես էլ տոմատի 1 պտղի սերմերի միջին քանակի վրա։ Այսպես օրինակ. Անահիտ սորտի մոտ պտղակալումը ազատ փոշոտման դեպքում կազմում է 35 %, սերմերի քանակը մեկ պտղի մեջ 72, ներսորտային խաչաձևման դեպքում ստացվում է 40 %, 89, իսկ մեկուսացված ինքնափոշոտման ժամանակ 10 %, 66, Զոլոտայա կորոլևա սորտի մոտ ազատ փոշոտման ժամանակ պտղակալումը կազմում է 70 %, սերմերի քանակը մեկ պտղի մեջ 85, ներսորտային խաչաձևման ժամանակ 90 %, 91, իսկ մեկուսացված ինքնափոշոտման ժամանակ 10 %, 80։ Շտամբովի № 31 սորտի մոտ նույն հաջորդականությամբ ստացվում է 65 %, 105, 80 %, 106, 40 %, 101։ Նման տվյալներ են ստացվել նաև Միկադո, Կրասնի սլիվովիդնի, Կրասնի գրուշևիդնի սորտերի մոտ (աղյուսակ 1)։

Հետաքրքիր է այն, որ երբ ներսորտային խաչաձևումը կատարվում է ծաղիկների առէջների կաստրացիայից հետո և առանց

կաստրացիայի, ապա փոխվում են տոմատի պտուղների մեջ եղած սերմերի քանակը։ Այսպես օրինակ. Անահիտ սորտի ներսորտային խաչաձևման դեպքում կաստրացիայից հետո ստացված պտուղների մեջ սերմերի քանակը կազմում է 113, իսկ առանց կաստրացիայի՝ 334, Էոլիանա սորտի մոտ՝ 192 և համապատասխանորեն՝ 313, Մայակ սորտի մոտ՝ 97 և համապատասխանորեն՝ 143 (աղյուսակ 2)։

Փոփոխվել է նաև մեկ պտղի մեջ եղած սերմերի քանակը հիբրիդիզացիայի և ծաղկափոշիների խառնուրդով փոշոտելու դեպքում։ ♀ Մարգլոբ × ♂ Կրասնի սլիվովիդնի կոմբինացիայում սերմերի քանակը կազմում է 61, ♀ Մարգլոբ × ♂ Զոլոտայա կորոլևա կոմբինացիայում՝ 90, իսկ ծաղկափոշիների խառնուրդով փոշոտելու դեպքում ♀ Մարգլոբ × ♂ (Կրասնի սլիվովիդնի + Զոլոտայա կորոլևա) կոմբինացիայում՝ 195։

Երբ ուսումնասիրում ենք ստացված տոմատի բույսերը, ապա տեսնում ենք, որ այստեղ էլ փոշոտման տարբեր վարիանտները տարբեր ձևով են ազդել և փոփոխել սերնդի կենսականությունը։ Այսպես օրինակ. Անահիտ սորտի մոտ ներսորտային խաչաձևումից ստացված բույսերի բարձրությունը հասնում է 116,0 սմ-ի, մեկ բույսի պտուղների քանակը 47, մեկ բույսի պտուղների ընդհանուր կշիռը 2131 գ, իսկ մեկ պտղի միջին կշիռը 120—150 գ, մեկուսացված ինքնափոշոտման վարիանտում նույն հաջորդականությամբ ստացվում է 78,3 սմ, 22, 1817 գ, 100—120 գ։ Նման տվյալներ են ստացվել նաև Միկադո, Շտամբովի № 31, Զոլոտայա կորոլևա, Կրասնի սլիվովիդնի, Կրասնի գրուշևիդնի սորտերի մոտ (աղյուսակ 3)։ Փոփոխվել է նաև պտուղների սերմերի մեջ եղած պահեստային նյութերի քանակը։ Շտամբովի № 31 սորտի մոտ ներսորտային խաչաձևման ժամանակ ճարպերը կազմել են 0,7799 գ, սպիտակուցները՝ 0, 4991 գ, լուծվող շաքարները՝ 0, 0967 գ, թաղանթանյութերը՝ 0,3725 գ, մոխիրը՝ 0,0723 գ, մեկուսացված ինքնափոշոտման ժամանակ նույն հաջորդականությամբ ստացվել է 0, 7442 գ, 0, 4544 գ, 0, 0995 գ, 0, 3365 գ, 0, 0551 գ (աղյուսակ 4)։

Կատարված ուսումնասիրությունները բերում են մեզ հետևյալ եզրակացությունների.

1. Փոշոտման տարբեր վարիանտները փոխում են տոմատի բեղմնավորման պրոցեսի ընթացքը, որը արտահայտվում է պտղակալման տոկոսի և պտուղների մեջ եղած սերմերի քանակի փոփոխմամբ։ Ներսորտային խաչաձևման ժամանակ պտղակալման տոկոսը բարձր է և սերմերի քանակն էլ պտուղների մեջ ավելի շատ է,

քան ազատ փոշոտման ու մեկուսացված ինքնափոշոտման դեպքում։ Ծաղկափոշիների խառնուրդով փոշոտելիս ստացված պտուղների սերմերը ավելի շատ են լինում, քան սովորական հիբրիդիզացիայի ժամանակ ստացված պտուղների սերմերը։

*2. **Փոշոտման տարբեր վարիանտները** տարբեր ձևով են ազդել տոմատի հիբրիդային սերնդի բույսերի կենսականության վրա։ Ներսորտային խաչաձևումից ստացված բույսերի բերքատվությունը, ինչպես նաև մեկ պտղի միջին կշիռը ավելի բարձր է, քան մեկուսացված ինքնաբեղմնավորումից ստացված բույսերինը։ Փոփոխվել է նաև սերմերի պահեստային նյութերի՝ ճարպերի, սպիտակուցների և լուծվող շաքարների քանակը։ Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ **տոմատի ներսորտային խաչաձևումը** դրական ազդեցություն է թողնում ինչպես բեղմնավորման պրոցեսի վրա, փոշոտման տարում, այնպես էլ ստացված սերնդի կենսականության վրա։*

Գենետիկայի և դարվինիզմի ամբիոն

Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետ. համալսարանի գիտ. աշխատություններ
Научные труды Ереванского государственного университета им. В. М. Молотова

49 1955

Դ. Պ. Զոլախյան

ՏԱՐԲԵՐ ՔԱՆԱԿԻ ԾԱՂԿԱՓՈՇՈՎ ՓՈՇՈՏԵԼՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ԲՈՒՅՍԵՐԻ ԿԵՆՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ներկայումս կուտակված բազմաթիվ հետազոտությունները ցույց են տալիս, որ բույսերի կենսականությունը փոփոխվում է բեղմնավորման պրոցեսին մասնակցող ծաղկափոշիների տարբեր քանակությունների ազդեցության տակ։

Ս. Պ. Խաչատուրովը [15] ծխախոտի, Յա. Ս. Այզենշտատը [3] տոմատի, Լ. Գ. Արուտյունովան [2], Ա. Մ. Արզումանովան [1], Դ. Վ. Տեր-Ավանեսյանը [14] բամբակենու, Ս. Գ. Հովհաննիսյանը [11] ցորենի, Գ. Ա. Լոբանովը [7] խնձորենու և հաղարջի վրա կատարած ուսումնասիրություններով ցույց են տալիս, որ երբ շատ է լինում բեղմնավորության պրոցեսին մասնակցող ծաղկափոշիների քանակը, այնքան ստացվող սերունդը աչքի է ընկնում իր բարձր բերքատվությամբ և փարթամությամբ, իսկ ծաղկափոշու սահմանափակ քանակով փոշոտումը առաջացնում է դեպրեսիվ՝ քիչ բերքատու սերունդ։

Գ. Հ. Բաբաջանյանը [4], Ա. Ա. Մկրտչյանը [8], Ս. Գ. Հովհաննիսյանը [11] ցորենի, Ի. Ռ. Կրասովսկին [6], Ն. Ռ. Սիմոնգուլյանը [13] բամբակենու, Ֆ. Մ. Նուբարյանը [9, 10], Բ. Ի. Դեյմոնտովիչը [5] բամբակենու, ծխախոտի և մախորկայի, Ն. Ս. Սարգսյանը [12] տոմատի վրա կատարած հետազոտություններից գալիս են այն եզրակացության, որ անգամ ինքնափոշոտվող բույսերի մոտ էլ մեկուսացված հարկադրական ինքնաբեղմնավորումը բացասաբար է ազդում նրանց բերքատվության, սերմերի ու պտուղների քանակի և կշռի վրա։

Նշված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բնական պայմաններում ծաղկափոշիների մեծ քանակության շնորհիվ, ընտրողական բեղմնավորության համար լայն հնարավորություններ

են ստեղծվում, որի շնորհիվ բարձրանում է բույսերի կենսական նությունը։

Մեր աշխատանքը կատարվել է 1950—51 թթ. բամբակենու 1298 սորտի վրա։ Փորձերի նպատակն է եղել ուսումնասիրել, թե ինչպիսի ազդեցություն կունենա բամբակենու բույսերի կենսականության վրա նույն սորտի տարբեր քանակի ծաղկափոշիներով (առատ, սահմանափակ) փոշոտելը։

28/7-50 թ. Փարաքարում, Հայկական ՍՍՌ ԳԱ Բույսերի գենետիկայի և սելեկցիայի ինստիտուտի փորձադաշտում, բամբակենու 1298 սորտի բույսերի մասսայական ծաղկման ժամանակ կատարվել է կաստրացիա և փոշոտում հետևյալ վարիանտներով. 1) փոշոտվել է 10 ծաղկի ծաղկափոշու խառնուրդով, 2) փոշոտվել է մեկ ծաղկի ծաղկափոշու խառնուրդով, 3) փոշոտվել է մեկ ծաղկի 5 առէջների ծաղկափոշով, 4) փոշոտվել է մեկ ծաղկի 3 առէջների ծաղկափոշով, 5) փոշոտվել է մեկ ծաղկի 1 առէջի ծաղկափոշով, 6) բամբակենու դեռ չբացված ծաղիկները վերցվել են մագաղաթի մեկուսացուցիչի մեջ՝ հարկադրական ինքնաբեղմնավորման համար։ Ընդամենը փոշոտվել է 700 ծաղիկ, բերքահավաքից հետո

Աղյուսակ 1

Ծաղկափոշու տարբեր քանակներով փոշոտելու ազդեցությունը բամբակենու 1298 սորտի կնգուղների վրա 1950 թ.

№№	Փոշոտման վարիանտները	Փոշոտումից հետո թափված կնգուղների %-ը	1 կնգուղի միջին		
			կշիռը գ-ով	սերմերի քանակը	սերմերի կշիռը գ-ով
1	Ազատ փոշոտվող կոնտրոլ	60	5,1	34	3,3
2	Մեկուսացուցչի մեջ վերցրած կոնտրոլ	83	4,2	29	2,7
3	Փոշոտված է նույն սորտի 10 ծաղիկների ծաղկափոշու խառնուրդով	86	7,4	41	4,6
4	Փոշոտված է նույն սորտի 1 ծաղկի ծաղկափոշու խառնուրդով	82	5,4	33	2,0
5	Փոշոտված է նույն սորտի ուրիշ ծաղկի 5 առէջների ծաղկափոշով	95	2,7	15	1,4
6	Փոշոտված է նույն սորտի ուրիշ ծաղկի 3 առէջների ծաղկափոշով	97	1,3	6	0,8
7	Փոշոտված է նույն սորտի ուրիշ ծաղկի 1 առէջի ծաղկափոշով	100	—	—	—

կատարվել է ստացված 77 կնգուղների անալիզ, որոշվել է մեկ կնգուղի ընդհանուր կշիռը և սերմերի քանակը։ Փոշոտման տարբեր վարիանտների ազդեցությունը 1-ին սերնդի բույսերի կենսականության վրա ուսումնասիրելու համար բամբակենու ստացված սերմերի մի մասը 24/4-51 թ. ցանվել է Փարաքարի դաշտում։ Կատարվել են ֆենոլոգիական դիտողություններ։ Բերքահավաքից հետո կատարվել է 809 փորձնական բույսերի անալիզ։

Անալիզների հանրագումարի բերված տվյալները ցույց են տալիս, որ փոշոտման տարբեր վարիանտները նկատելի ազդեցություն են թողել բամբակենու կնգուղների վրա։ Սահմանափակ փոշոտման ժամանակ կնգուղների պտղավիրժման տոկոսը ավելի բարձր է, քան ազատ փոշոտվող կոնտրոլի բույսերի մոտ (աղյուսակ 1)։ Մեկ առէջով փոշոտելիս պտղավիրժումը կազմել է 100 %, 3 առէջներով փոշոտելիս՝ 97 %, ազատ փոշոտվող կոնտրոլի մոտ՝ 80 %, իսկ 10 ծաղկի ծաղկափոշով փոշոտելիս՝ 86 %։ Փոշոտման տարբեր վարիանտների ազդեցության տակ փոփոխվել է 1 կնգուղի միջին կշիռը, սերմերի քանակը և կշիռը։ Հարկադրական ինքնաբեղմնավորման ժամանակ մեկ կնգուղի միջին կշիռը, 0,9 գ-ով պակաս է ազատ փոշոտվող կոնտրոլից ստացված կնգուղների կշռից, իսկ սերմերի քանակը 5 հատով պակաս է կոնտրոլից, ցածր է նաև սերմերի ընդհանուր կշիռը (աղյուսակ 1)։ Երբ փոշոտումը կատարվել է 10 ծաղիկների ծաղկափոշիների խառնուրդով, ապա ստացված կնգուղների միջին կշիռը բարձրացել հասել է 7,4 գ-ի (ազատ փոշոտվող կոնտրոլի մոտ 5,1 գ-ի), ավելացել է մեկ կնգուղի մեջ եղած սերմերի քանակը՝ 41 հատ, կշիռը, 4,6 գ (կոնտրոլում համապատասխանաբար՝ 34, 3,3 գ է)։ Երբ փոշոտումը կատարվել է նույն սորտի մեկ ուրիշ ծաղկի ծաղկափոշով, ապա ստացվել են նույնպիսի տվյալներ, ինչպիսին ազատ փոշոտվող բույսերի մոտ է։ Սահմանափակ փոշոտումը բացասաբար է ազդել կնգուղների կշռի և սերմերի քանակի վրա։ Այսպես օրինակ. 5 առէջների ծաղկափոշով փոշոտելիս ստացված կնգուղների միջին կշիռը 2,4 գ-ով և 3 առէջների ծաղկափոշով փոշոտելիս 3,8 գ-ով ցածր է կոնտրոլից, սերմերի քանակը 1-ին դեպքում 15 հատ է, 2-րդի դեպքում 6 հատ (ազատ փոշոտվող կոնտրոլի բույսերի մոտ՝ 34 հատ)։ Ցածր է նաև մեկ կնգուղի մեջ եղած սերմերի ընդհանուր կշիռը։

Ֆենոլոգիական դիտողությունները՝ կատարված 23/6-51 թ. ցույց են տալիս, որ փոշոտման տարբեր վարիանտների միջոցով

ստացված բույսերի մոտ կան տարբերություններ ինչպես աճման, այնպես էլ զարգացման տեմպի միջև։ Սահմանափակ փոշոտումից ստացված բույսերը մեր դիտումների ժամանակ (աղյուսակ 2) ավելի բարձր են և նրանց տերևների քանակը ավելի շատ է ազատ փոշոտվող բույսերի տերևներից։ 5 առէջով փոշոտելիս բույսերի միջին բարձրությունը 10,4 սմ է, բույսերի 26,1 %-ը ունի 6 տերև, 43,5%-ը՝ 7 տերև, 21,7%-ը՝ 8 տերև։ Կոնտրոլում նույն հաջորդականությամբ՝ 8,0 սմ 21,9 %, 23,1 %, 13,1%։ 10 ծաղկի ծաղկափոշով փոշոտելիս բույսերի միջին բարձրությունը՝ 9,5 սմ է։ Տերևների քանակը տարբեր բույսերի մոտ տարբեր է։ Կան 2-ից մինչև 10 տերև ունեցող բույսեր։ Իսկ 3 առէջով փոշոտելիս բույսերի բարձրությունը 10,8 սմ է, տերևների քանակի մեջ տարբեր բույսերի միջև խիստ տարբերություններ չկան։ Այսպես օրինակ, բույսերի 71,4%-ը ունի 7 տերև, իսկ 28,5%-ը՝ 8 տերև, այն ժամանակ, երբ 10 ծաղկի ծաղկափոշով փոշոտելիս 7 տերև ունեցող բույսերը կազմում են 34,1%, իսկ 8 տերև ունեցող բույսերը 18,2% (աղյուսակ 2)։

Փոշոտման տարբեր վարիանտները տարբեր ձևով են ազդել նաև ստացված սերնդի բույսերի ծաղկման վրա։ Մեր դիտումների ժամանակ (15/7-51 թ.), բույսերի մի մասի վերջին ծաղիկը 1-ին պտղաբեր ճյուղի վրա էր, մյուսները՝ 2-րդ, 3-րդ, 4-րդ կամ 5-րդ։ Աղյուսակ 3-ում բերված տվյալները ցույց են տալիս, որ ինչպես ազատ փոշոտվող կոնտրոլ բույսերի, նույնպես և 10 ու մեկ ծաղկի ծաղկափոշով փոշոտելիս ստացված բույսերի ծաղկման ընթացքի մեջ նկատվում են տարբերություններ։ Այդ վարիանտներում մեր դիտումների ժամանակ առանձնապես շատ էին այնպիսի բույսերը, որոնց վերջին ծաղիկը 2-րդ, 3-րդ և 4-րդ պտղաբեր ճյուղերի վրա էր։ Այլ բան է նկատվել սահմանափակ փոշոտման ժամանակ։ Այս դեպքում ծաղկումը ավելի շուտ է սկսվել և բույսերի մեծ մասի վերջին ծաղիկները գտնվում են պտղաբեր ավելի բարձր ճյուղերի վրա. օրինակ՝ երբ փոշոտվել է 5 առէջների ծաղկափոշով, ստացված բույսերի 47,8%-ի մոտ վերջին ծաղիկը 4-րդ պտղաբեր ճյուղի վրա էր, իսկ 26,1%-ի մոտ՝ 5-րդ ճյուղի վրա։ 3 առէջների ծաղկափոշով փոշոտելիս ստացված բույսերի 42,8%-ի մոտ վերջին ծաղիկը 3-րդ պտղաբեր ճյուղի վրա էր, իսկ 42,8%-ի մոտ՝ 4-րդ պտղաբեր ճյուղի վրա, այն ժամանակ, երբ ազատ փոշոտվող կոնտրոլի մոտ բույսերի 26,1 %-ի վերջին ծաղիկը 2-րդ պտղաբեր

Աղյուսակ 2

Փոշոտման տարբեր վարիանտների ազդեցությունը բամբակենու 1298 սորտի բույսերի կենսականության վրա 1951 թ.

№№	1950 թ. փոշոտման վարիանտները	Բույսերի քանակը	1 բույսի միջին բարձրությունը սմ-ով	Բույսերի %-ը								
				2 տերև ունեցող	3 տերև ունեցող	4 տերև ունեցող	5 տերև ունեցող	6 տերև ունեցող	7 տերև ունեցող	8 տերև ունեցող	9 տերև ունեցող	10 տերև ունեցող
1	Ազատ փոշոտվող կոնտրոլ	121	8,0	2,5	3,3	12,4	19,7	21,9	23,1	13,1	0,8	2,5
2	Մեկուսացուցչի մեջ վերցրած կոնտրոլ	114	7,9	0,9	—	4,4	10,5	45,6	35,1	2,6	—	0,9
3	Փոշոտվել է նույն սորտի 10 ծաղիկների ծաղկափոշու խառնուրդով	179	9,5	1,1	—	2,8	5,6	32,4	34,1	18,2	4,6	0,6
4	Փոշոտվել է նույն սորտի 1 ծաղկի ծաղկափոշու խառնուրդով	166	9,4	0,6	3,6	5,4	7,8	27,1	30,1	19,5	0,9	4,8
5	Փոշոտվել է նույն սորտի ուրիշ ծաղկի 5 առէջների ծաղկափոշով	23	10,4	—	—	—	8,7	26,1	43,5	21,7	—	—
6	Փոշոտվել է նույն սորտի ուրիշ ծաղկի 3 առէջների ծաղկափոշով	7	10,8	—	—	—	—	—	71,4	28,5	—	—

Աղյուսակ 3

Ծաղկափոշու տարբեր խանակներով փոշոտելու ազդեցությունը բամբակենու 1298 սորտի 1-ին սերնդի բույսերի կենսականության վրա 1951 թ.

№№	1950 թ. փոշոտման վարիանտները	Բույսերի քանակը	Վերջին ծաղկի տեղը (25/7-1951 թ.) պտղաբեր: 1-ին ճյուղի վրա		2-րդ ճյուղի վրա		3-րդ ճյուղի վրա		4-րդ ճյուղի վրա		5-րդ ճյուղի վրա	
			քանակը	%-ով	քանակը	%-ով	քանակը	%-ով	քանակը	%-ով	քանակը	%-ով
1	Ազատ փոշոտվող կոնտրոլ	107	9	8,4	28	26,1	40	37,3	25	23,3	5	4,6
2	Մեկուսացուցչի մեջ վերցրած կոնտրոլ	103	13	12,6	35	34,0	29	28,2	24	23,3	2	1,9
3	Փոշոտված է նույն սորտի 10 ծաղիկների ծաղկափոշու խառնուրդով	94	12	12,7	37	39,3	28	29,7	12	12,7	5	5,3
4	Փոշոտված է նույն սորտի 1 ծաղկի ծաղկափոշու խառնուրդով	115	12	10,4	30	26,0	32	27,8	30	26,0	11	9,5
5	Փոշոտված է նույն սորտի ուրիշ ծաղկի 5 առէջների ծաղկափոշով	23	1	4,3	3	13,0	2	8,7	11	47,8	6	26,1
6	Փոշոտված է նույն սորտի ուրիշ ծաղկի 8 առէջների ծաղկափոշով	7	—	—	1	14,3	3	42,8	3	42,8	—	—

ճյուղի վրա էր, բույսերի 37,3%-ի մոտ 3-րդ, իսկ 23,3%-ի մոտ վերջին ծաղիկը՝ 4-րդ պտղաբեր ճյուղի վրա էր (աղյուսակ 3)։

Այս տվյալները ցույց են տալիս, որ սահմանափակ փոշոտման ժամանակ ստացվում են ավելի շուտ ծաղկող ու ինչպես իրենց աճման, այնպես էլ զարգացման շրջանը ավելի արագ անցկացնող բույսեր։ Նշված տվյալները մասամբ հակասում են գրականության մեջ սահմանափակ փոշոտման վերաբերյալ եղած հետազոտությունների տվյալներին, սակայն միաժամանակ ցույց են տալիս, որ յուրաքանչյուր կուլտուրա և սորտ յուրահատուկ է փոփոխվում փոշոտման այս կամ այն վարիանտի դեպքում։

Բերքահավաքի ժամանակ և հետո կատարած անալիզներից (աղյուսակ 4) պարզվեց, որ փոշոտման տարբեր վարիանտները ազդել են նաև ստացված սերնդի բույսերի բերքատվության, թփի կշռի, բարձրության ու պտղաբեր ճյուղերի քանակի վրա։ Փոշոտման բոլոր վարիանտներում ազատ փոշոտվող կոնտրոլի բույսերից ավելի բարձր ու փարթամ բույսեր ստացվել են սահմանափակ փոշոտման ժամանակ։ Օրինակ՝ 3 առէջներով փոշոտելիս 17,0 սմ-ով ավելի բարձր բույսեր են ստացվել, քան ազատ փոշոտվող կոնտրոլի մոտ։ Դրան զուգընթաց փոխվել է նաև 1 բույսի ընդհանուր (միջին) կշիռը։ 3 առէջներով փոշոտելիս ստացված բույսերի կշիռը 43,6 գ է, իսկ 5 առէջներով փոշոտելիս ստացված բույսերինը՝ 33,6 գ (կոնտրոլում՝ 26,2 գ)։ Պտղաբեր ճյուղերի միջին քանակը թեև 3 առէջներով փոշոտված բույսերի սերնդի մոտ քիչ չէ՝ 6 հատ (կոնտրոլում 6), բայց բերքատվությունը շատ ցածր է։ Բերված տվյալները չեն նշանակում, որ սահմանափակ փոշոտման ժամանակ ստացված բույսերը օժտված են բարձր կենսականությամբ, այլ ցույց են տալիս, որ այդ բույսերը կարծես շտապում են վերջացնելու իրենց կյանքի ցիկլը և թեև փարթամ են, սակայն իրենց ցածր բերքատվությամբ զգալիորեն տարբերվում են մյուս վարիանտներից ստացված բույսերի բերքատվությունից։ 10 ծաղիկների ծաղկափոշու խառնուրդով փոշոտելու միջոցով ստացված բույսերի մոտ տեսնում ենք, որ միջին բարձրությունը ավելի փոքր է, քան կոնտրոլի բույսերի մոտ, սակայն ընդհանուր կշիռը, ինչպես նաև պտղաբեր ճյուղերի միջին քանակը ավելի շատ է։ Բույսերի միջին բարձրությունը՝ 59,9 սմ է, կշիռը՝ 37,1 գ, պտղաբեր ճյուղերի քանակը՝ 8 հատ (աղյուսակ 4), իսկ մեկ բույսի միջին բերքատվությունը հասնում է՝ 19,5 գ-ի, այսինքն 2,8 գ-ով ավելի, քան ազատ փոշոտվող կոնտրոլի բույսերի մոտ է և 5,9 գ-ով

Աղյուսակ 4

Ծաղկափոշու տարբեր ձևանակներով փոշոտելու ազդեցությունը բամբակենու 1298 սորտի 1-ին սերնդի բույսերի կենսունակության վրա 1951 թ.

№№	1950 թ. փոշոտման վարիանտները	Բույսերի քանակը	Մեկ բույսի (միջին)			
			բարձրությունը սմ-ով	կշիռը գ-ով	պտղաբեր ճյուղերի քանակը	բերքատվությունը գ-ով
1	Ազատ փոշոտվող կոնտրոլ	124	60.2	26.2	6	16,7
2	Մեկուսացուցչի մեջ վերցրած կոնտրոլ	119	62,9	25,0	6	14,1
3	Փոշոտված է նույն սորտի 10 ծաղիկների ծաղկափոշու խառնուրդով	180	59,9	37,1	8	19,5
4	Փոշոտված է նույն սորտի 1 ծաղկի ծաղկափոշու խառնուրդով	157	67,6	27,1	6	17,6
5	Փոշոտված է նույն սորտի ուրիշ ծաղկի 5 առէջների ծաղկափոշով	22	69,7	33,6	5	13,6
7	Փոշոտված է նույն սորտի ուրիշ ծաղկի 3 առէջների ծաղկափոշով	7	77,2	43,6	6	5,7

ավելի, քան 5 առէջների ծաղկափոշով փոշոտած բույսերի սերնդում։ Բերքատվությունը ցածր է 3 առէջներով փոշոտելիս՝ ստացված բույսերի մոտ 5,7 գ (կոնտրոլում՝ 16,7 գ)։ Մեկուսացված ինքնաբեղմնավորման ժամանակ ստացված բույսերի միջին բերքատվությունը ազատ փոշոտվող կոնտրոլ բույսերի համեմատությամբ ցածր է՝ 2,6 գ-ով, իսկ 10 ծաղիկների ծաղկափոշու խառնուրդով փոշոտման վարիանտի բույսերի միջին բերքատվության հետ համեմատած 5,4 գ-ով։

Բերված տվյալները ցույց են տալիս, որ թեև բամբակենին ինքնափոշոտվող բույս է, բայց բնական պայմաններում, երբ սեփական ծաղկափոշու առկայության հետ միասին շատ են նաև նույն սորտի այլ բույսերի ծաղկափոշիները, բեղմնավորման պրոցեսը ավելի ինտենսիվ է կատարվում, քան մեկուսացված ինքնաբեղմնավորման ժամանակ՝ մեկուսացուցչի մեջ վերցրած ծաղիկներում, որտեղ բույսը սեփական ծաղկափոշուց բացի ուրիշ ծաղկափոշով փոշոտվելու հնարավորություն չունի։ 10 ծաղիկների ծաղկափոշիների խառնուրդով փոշոտելիս ստացվող կնգուղները իրենց կշռով ավելի բարձր են ազատ փոշոտվող կոնտրոլ բույ-

սերի կնգուղներից։ Այդ կարելի է բացատրել նրանով, որ այս դեպքում բամբակենու ծաղկի փոշոտվող սպին ստացել է իրեն համար համեմատաբար օտար՝ 10 ուրիշ ծաղիկների որակապես տարբեր ծաղկափոշի, իսկ այդպիսի ծաղկափոշիների խառնուրդով փոշոտելու դեպքում բեղմնավորման պրոցեսը ավելի ինտենսիվ է ընթանում, քանի որ բույսը լայն հնարավորություն է ստանում ընտրելու իրեն բնույթին ավելի հարմար ծաղկափոշի։

Գենետիկայի և դարվինիզմի ամբիոն

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Арзуманова А. М.— О цветении и оплодотворении хлопчатника. Журнал, „Агробиология“, 1951, № 1.
2. Арутюнова Л. Г.— Внутрисортовое переопыление хлопчатника. Журнал „Агробиология“, 1950, № 5.
3. Айзенштат Я. С.—Влияние чужеопыления на плодовитость и свойства гибридных плодов. Доклады АН СССР, т. XXVII, 1951, № 6.
4. Бабаджанян Г. А.— Заметки о явлениях полового ментора у растений. Известия АН СССР (серия биологических наук) 1949, № 4.
5. Деймонтович Б. И.— О принудительном самоопылении табака. Журнал „Агробиология“, 1951, № 5.
6. Красовский И. Р.—Влияние принудительного самоопыления у хлопчатника на плодоношение и продуктивность. Журнал „Яровизация“, 1941, № 1(34).
7. Лобанов Г. А.— Влияние различного количества пыльцы на оплодотворение. Журнал „Агробиология“, 1950, № 3.
8. Мкртчян А. А. — Избирательная способность оплодотворения и селекция пшеницы (диссертация), 1951.
9. Нубарян Ф. М.— Влияние изолированного самоопыления цветков табака на потомство. Известия АН Арм. ССР (серия биологических наук), 1949, № 1—2.
10. Нубарян Ф. М.— Влияние изолированного самоопыления на хлопчатник. Известия АН Арм. ССР (серия биологических наук), 1950, № 5.
11. Оганесян С. Г.— Некоторые особенности биологии оплодотворения пшеницы (диссертация), 1951.
12. Саркисян Н. С.— Продуктивность растений томата при различных вариантах опыления. Известия АН Арм. ССР (серия биологических наук), т. III, 1950, № 9.

13. Симонгулян Н. Р.— Влияние дополнительного опыления на продуктивность хлопчатника. Известия АН Арм. ССР (серия биологических наук), т. III, 1950, № 1.
14. Тер-Аванесян Д. В.— Оплодотворение растений ограниченным количеством пыльцы. Журнал „Агробиология", 1946, № 5.
15. Хачатуров С. П. —О закономерностях развития потомства у гибридов. Журнал „Яровизация", 1939, № 2.

Д. П. Чолахян

ВЛИЯНИЕ ОПЫЛЕНИЯ РАЗНЫМ КОЛИЧЕСТВОМ ПЫЛЬЦЫ НА ЖИЗНЕННОСТЬ РАСТЕНИЯ ХЛОПЧАТНИКА

Резюме

В процессе опытов изучалось влияние различных количеств пыльцы на оплодотворение, а также на жизненность полученного потомства хлопчатника сорта 1298. Опыление кастрированных цветков хлопчатника проводилось пыльцой того же сорта по следующим вариантам:

1) Смесью пыльцы 10-ти цветков (обильное опыление);
2) Смесью пыльцы одного цветка;
3) Пыльцой пяти, трех, одной тычинки одного цветка;
4) Изолированное самооплодотворение.

Для контроля были взяты свободно опыляющиеся цветки хлопчатника. Всего было опылено 700 цветков, из которых после опадения осталось 77 коробочек.

Наблюдения показывают, что разные варианты опыления по-разному влияют на общий вес и количество семян одной коробочки. При обильном опылении смесью пыльцы 10-ти цветков вес одной коробочки составляет 7,4 *г*, количество семян—41, вес семян—4,6 *г*. При опылении пыльцой одного цветка соответственно получается—5,4 *г*, 33, 2,0 *г*, при изолированном самооплодотворении соответственно—4,2 *г*, 29, 2,7 *г*, а у контрольных растений—5,1 *г*, 34, 3,3 *г*. Вес коробочек, семян, а также количество семян значительно понижается при ограни-

ченном опылении. Так, например, при опылении пыльцой пяти тычинок тем же порядком получается 2,7 *г*, 15, 1,4 *г*, а при опылении пыльцой трех тычинок—1,3 *г*, 6, 0,8 *г*.

Исследования показали, что опыление различным количеством пыльцы по-разному влияет на жизненность полученных растений. Изменяется высота и вес, а также продуктивность одного растения. Интересно, что растения, полученные от опыления ограниченным количеством пыльцы, имеют наибольшую высоту и вес по сравнению с растениями, полученными от свободноопыляющегося контроля, но продуктивность одного растения низкая. Так, например, от опыления пыльцой пяти тычинок получаются растения высотой в 69,7 *см*, вес одного растения составляет 33,6 *г*, а количество продукции одного растения равно 13,6 *г*; при опылении пыльцой трех тычинок у потомства соответственно получается 77,2 *см*, 43,6 *г*, 5,7 *г*, а у растений, полученных от свободно опыляющегося контроля,— 60,2 *см*, 26,2 *г*, 16,7 *г*. Заметно также, что одногодичное изолированное самооплодотворение отрицательно влияет на жизненность растений. Урожай растений, полученных от опыления смесью пыльцы 10-ти цветков, в среднем составляет 19,5 *г*.

Приведенные данные показывают, что ограниченное опыление отрицательно влияет в год опыления на вес одной коробочки, на количество и вес семян, а также на продуктивность полученных растений. При обильном опылении смесью пыльцы 10-ти цветков создается относительная разнородность, обеспечивающая избирательность оплодотворения, почему и процесс оплодотворения происходит интенсивно. Благодаря этому коробочки, полученные в год опыления, обладают большим весом и содержат большее количество семян. Растения же, полученные от семян обильного опыления, обладают большей продуктивностью.

Кафедра генетики и дарвинизма

Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետ. համալսարանի գիտ. աշխատություններ
Научные труды Ереванского государственного университета им. В. М. Молотова
49 1955

Ն. Պ. Բեգլարյան

ՁԵՌՔԲԵՐՈՎԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ Չ. ԴԱՐՎԻՆԻ ԷՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՈՒՍՄՈՒՆՔՈՒՄ

Մինչդարվինյան շրջանում իշխող մետաֆիզիկան արտամղվեց այն ժամանակվա առաջավոր մտքի ներկայացուցիչների էվոլյուցիոն հայացքներով և խոշորագույն հայտնագործություններով, որոնք հող նախապատրաստեցին գիտական էվոլյուցիոն տեսության համար։ Այդպիսի տեսության գաղափարական հիմքը նախապատրաստվեց հատկապես տրանսֆորմիստական գաղափարներով Ժ. Բ. Լամարկի, Ժ. Սենտ-Իլերի, ռուս գիտնականներից՝ Մ. Վ. Լոմոնոսովի, Պ. Գ. Գորյանինովի, Կ. Ֆ. Վոլֆի, Կ. Մ. Բերի, Կ. Ֆ. Ռուլյեի և ուրիշների էվոլյուցիոն հայացքներով։

Այդ ժամանակաշրջանում կուտակված փաստական մատերիալը նպաստեց աստիճանաբար նորերի հայտնագործմանը, որոնք, ուղղվելով իշխող աշխարհայացքի՝ մետաֆիզիկայի դեմ, խախտեցին նրա երկաթյա շրջանակները։

Այդպիսի հեղաշրջման համար պայմաններ ստեղծվեցին XIX դարի 2-րդ կեսին Անգլիայում։

Գիտական բիոլոգիայի հիմքերը դրվեցին Չ. Դարվինի կողմից։ Դարվինի ուսմունքը հանդիսացավ, մի կողմից՝ իրեն նախորդող գիտության զարգացման, մյուս կողմից՝ զարգացող կապիտալիզմի գաղափարական ազդեցության արդյունք։

Բնության զարգացման օրենքների ճանաչումը Դարվինի կողմից վճռական և մահացու հարված էր մետաֆիզիկային և թեոլոգիային։

Դարվինի հայտնաբերած օրգանական աշխարհի օրինաչափությունները իրենց արտահայտությունն են գտել նրա «Տեսակների ծագումը բնական ընտրության ճանապարհով» աշխատության մեջ։

Դարվինի ուսմունքի հիմնական բովանդակությունը անընդհատ

գործող ընտրությունն է համապատասխան բնական և արհեստական պայմաններում։

Դարվինի ուսմունքը զարգացրին և հարստացրին առաջավոր մտքի ներկայացուցիչները ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Արևմուտքում, և վերափոխված ձևով կազմեց ժամանակակից մատերիալիստական բիոլոգիայի հիմքը։

Քանի որ մեր նպատակը հիմնականում Դարվինի ուսմունքում ձեռքբերովի հատկությունների ժառանգման պրոբլեմի ուսումնասիրությունն է, այդ նպատակով մենք կաշխատենք լուսաբանել գլխավորապես նրա ուսմունքի այն կողմերը, որոնք շոշափում են այդ հարցը։

Էվոլյուցիոն տեսության մշակմանը մոտենալով ընտանի կենդանիների և կուլտուրական բույսերի ուսումնասիրությունից, Դարվինը կարողացավ բացահայտել ընտրության դերը հատկանիշների կուտակման գործում և ժխտել մետաֆիզիկների այդ կապակցությամբ բերած բոլոր «ապացույցները»։

Սելեկցիոն պրակտիկայի վրա հիմնված, Դարվինի ուսմունքը ապացուցում է, որ պրոգրեսը օրգանական աշխարհում հանդիսանում է բնական ընտրության անընդհատ գործունեության անհրաժեշտ հետևանքը։

Ըստ Դարվինի բնական ընտրությունը, որի շնորհիվ տեսակները հիանալի կերպով հարմարվում են գոյության տարբեր պայմաններին, երբեք չի կարող տանել բացարձակ կատարելության. նրա գործունեության արդյունքը համարվում է բնության մեջ եղած հարաբերական նպատակահարմարությունը, որը պայմանավորված է ժամանակով և տեղով։

Ի հակադրություն իր ժամանակին իշխող տեսակետների, Դարվինը հսկայական նյութի հիման վրա ապացուցեց, որ անընդհատ գործող բնական ընտրությունը, պահպանելով հարմարված օրգանիզմները և շարքից հանելով ոչ-հարմարվածները, նրանց կյանքի տարբեր էտապներում, փոփոխականությունը տանում է հարմարվողականության կուտակման ուղղությամբ։ Նա հանդիսանում է տեսակների ստեղծման և նրանց նպատակահարմար հարմարվողականության պրոցես։

Այսպիսով, Դարվինը զինաթափեց թեոլոգիան նրանով, որ առանց ժխտելու օրգանական աշխարհում նպատակահարմարության փաստը, հայտնաբերեց այն օրենքը, որի շնորհիվ նպատա-

կահարմարությունը պատմականորեն իրականանում է և կրում է հարաբերական բնույթ։

Դարվինի ուսմունքի համաձայն օրգանական աշխարհի էվոլյուցիայի հիմնական գործոնը անընդհատ գործող բնական ընտրությունն է։

Բնական ընտրությանն ուղղություն են տալիս հետևյալ պայմանները. անհատական փոփոխականության աստիճանը, անհատների քանակությունը, օրգանիզմների իրենց հատկությունները ժառանգաբար սերունդներին հաղորդելու ընդունակությունը, տեսակների տարածման սֆերայի ընդարձակությունը, ժամանակի տևականությունը և մասամբ էլ բնական մեկուսացումը։

Օրգանական աշխարհի էվոլյուցիայում Դարվինը զգալի տեղ է հատկացրել գոյության պայմաններին։ Նրա կարծիքով օրգանիզմի հատկությունները և հատկանիշները պայմանավորված են նրա կենսապայմաններով, որոնցում օրգանիզմը փոխվում և ձեռք է բերում հարմարվողական բնույթ։

«Ո՞ր սատանան է փոխում ձևերը, եթե ոչ արտաքին պայմանները»[1],—գրում է Դարվինը։

Անդրադառնալով ընտանի կենդանիների հատկությունների և հատկանիշների փոփոխականության գործում միջավայրի դերին, Դարվինը հաստատում է, որ օրգանիզմներում տեղի ունեցող յուրաքանչյուր աննշան փոփոխություն պայմանավորված է կյանքի պայմաններում տեղի ունեցած փոփոխություններով։

Դարվինը ընտանի ձևերի հատկանիշների և հատկությունների փոփոխության մեջ առանձնահատուկ ուշադրություն է նվիրել սննդին և հայտնել է այն միտքը, որ սնունդը անմիջական ազդեցություն ունի ցեղի առանձնահատկությունների, նրա չափերի մեծացման և փոքրացման վրա։

Խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների, խոզերի փոփոխված ձևերը (ճարպակալումը, արագ աճը և այլն) հանդիսանում են առաջին հերթին սննդի անմիջական գործունեության արդյունք։

Օրգանիզմի կառուցվածքի առաջացման և ուժեղացման, կամ թուլացման գործում Դարվինը մեծ նշանակություն էր տալիս նաև կենդանիների էվոլյուցիայի մեկ ուրիշ գործոնին՝ օրգանների վարժեցմանը և չվարժեցմանը։

---

[1] Ч. Дарвин, Изменчивость животных и растений в одомашнении, М., 1941, էջ 152.

Հենվելով մեծ թվով փաստերի վրա, Դարվինը ապացուցում է, որ սովորությունները և վարժեցումը ուժեղացնում են օրգանը՝ համապատասխան ուղղությամբ։ Օրգանիզմի մասերի անընդհատ վարժեցումը փոխում է մարմնի ձևը և չափերը։ Այսպես օրինակ՝ առանց մշտական մարզման անգլիական արշավածիերը և ճեպընթաց շները երբեք չէին կարող բարձրանալ իրենց կատարելագործման ներկայիս բարձր աստիճանին։

Դարվինը խոսել է նաև կոռելյատիվ, հիբրիդիզացիայից առաջացած, երկարատև և այլ տիպի փոփոխությունների մասին։

Զարգացման միասնական պրոցեսի էական կողմերը Դարվինը համարում է, մի կողմից՝ անհատական կյանքի ընթացքում առաջացած փոփոխությունների կուտակումը և պահպանումը, մյուս կողմից՝ կյանքի տվյալ պայմաններին չհարմարված օրգանիզմների ոչնչացումը։

Դարվինի ուսմունքի համաձայն, հարմարվածների պահպանումը ոչ այլ ինչ է, եթե ոչ նրանց կազմից չհարմարվածների հեռացումը, այլ կերպ ասած՝ օրգանիզմների կողմից փոփոխված պայմաններին համապատասխան կրած փոփոխությունների կուտակումը սերունդներում։

Այսպիսով՝ պատմականորեն անընդհատ գործող բնական ընտրության արդյունքը ըստ Դարվինի ուսմունքի, հանդիսանում է օրգանական աշխարհի կատարելագործումը, պրոգրեսը, ինչպես նաև օրգանական աշխարհում գոյություն ունեցող բազմազանությունը։

Հաղթահարելով իրեն նախորդող մետաֆիզիկական շրջանի բիոլոգիական գիտության սահմանափակվածությունը, որի համաձայն տեսակները իբրև առանձին-առանձին, իրարից անկախ ստեղծված, չէին կարող առաջանալ մեկը մյուսից, Դարվինը իր էվոլյուցիոն ուսմունքում բացատրեց տեսակների միմյանցից պատմականորեն առաջացումը։ Դարվինը հաստատեց, որ յուրաքանչյուր տեսակի էվոլյուցիան ուղեկցվում է հատկանիշների անջատմամբ՝ դիվերգենցիայով։ «Միևնույն տեսակի այլատեսակները տարբերող չնչին տարբերությունները հակում ունեն ընդարձակվելու մինչև տեսակային, անգամ ցեղային չափերի»[1]։

Այսպիսով, ըստ Դարվինի, բնական ընտրությունը և հատկանիշների անջատումը երկարատև էվոլյուցիայի պրոցեսում հին տե-

[1] Ч. Дарвин, Происхождение видов, Изд. с х лит., 1952. էջ 174.

սակը տանում է այլատեսակների. և դրանցից էլ՝ նոր տեսակների առաջացմանը։ Դարվինի դիվերգենցիայի տեսության մեջ արտացոլվում է օրգանական բնության զարգացման պատմականությունը։ Նրա համաձայն, բնության մեջ գոյություն ունեցող բազմազանությունը պայմանավորվում է տարբեր պայմաններում ձեռք բերած հատկությունների ժառանգման օրենքի գործունեությամբ, տարբեր ուղղություններով մի տեսակի հատկանիշների անջատմամբ։

Սակայն պետք է ասել, որ Դարվինին չհաջողվեց բացատրել հատկանիշների անջատմանը նպաստող պատճառները, շարժիչ ուժերը, որովհետև նա առաջնորդվում էր սահուն էվոլյուցիոնիզմով։ Համաձայն դրա, փաստորեն չպետք է լինեն սահմաններ նոր ծնվող և մեռնող՝ հին տեսակների միջև, հետևապես անհնարին է հայտնաբերել նորի առաջացումը։

Մինչդեռ հակառակ սահուն էվոլյուցիոնիզմի, տեսակների միջև սահմաններ կան և յուրաքանչյուր բնախույզ, ինչպես և Դարվինը գործ են ունեցել ռեալ գոյություն ունեցող և իրարից տարբերվող տեսակների հետ։

Դարվինը դիվերգենցիայի՝ հատկանիշների անջատման, իր տեսությունը կառուցել է ներտեսակային կոնկուրենցիայի գաղափարի հիման վրա, որով և նա փորձել է բացատրել տեսակների միջև եղած սահմանները։ Նրա կարծիքով այդ սահմանները ստեղծվել են ո՛չ թե օրգանիզմների որակական նոր խմբերի առաջացման հետևանքով, այլ որակապես իրարից չտարբերվող անընդհատ շարքում իրար կողք-կողքի գտնվող ձևերի միմյանց մեխանիկական ոչնչացման ճանապարհով։

Ահա թե ի՛նչու Դարվինը և սահուն էվոլյուցիոնիզմի բոլոր հետևորդները, գործ ունենալով տեսակների հետ, չէին ընդունում նրանց ռեալ գոյությունը բնության մեջ և տեսակ տերմինը համարում էին պայմանական հորինված դասակարգման հարմարության համար։

Պարզ է, որ այդպիսի բացատրությունը չէր կարող կենդանի բնությունը պրակտիկայի շահերի օգտին պլանաչափ փոփոխության տեսական հիմք ծառայել։

Այնուամենայնիվ, Դարվինը, առաջ քաշելով օրգանական աշխարհի հիմնական օրենքի՝ ձեռքբերովի հատկությունների և հատկանիշների ժառանգման հարցը, վճռականորեն արտահայտվում է էվոլյուցիայի համար շատ կարևոր նշանակություն ունեցող, ժա-

ռանգելիության այդ ձևի օգտին։ Այդ միտքը թափանցում է նրա ամբողջ տեսությունը և լույս է սփռում նրա ուսմունքի հիմքում ընկած բնական և արհեստական ընտրությունների գործունեության վրա։ Դարվինի համար միանգամայն ակնհայտ էր, որ առանց անհատական կյանքի պայմանների ազդեցության, առանց ձեռք բերած փոփոխությունների ժառանգման, անհնարին է սերունդներում հաջորդականությունը, անհնարին է սերունդների կողմից իրենց ծնողների և նախահայրերի հարմարվողական փոփոխությունների և հնարավորությունների հարստության օգտագործումը։ Առանց այդ տիպի ժառանգման անհնարին է և անմիտ պատկերացնել օնտոգենեզի և ֆիլոգենեզի կապը, տեսակի զարգացումը և հարստացումը, հետևապես առանց այդ տիպի ժառանգման անհնարին է անհատի և տեսակի պատմությունը։

Տեսակների պատմականորեն առաջացման և զարգացման մասին Դարվինի էվոլյուցիոն ուսմունքը անհասկանալի կլիներ, առանց նրա մեջ անհատական կյանքի ընթացքում ծնողների կրած փոփոխությունները սերունդներին հաղորդելու ընդունակությունը հաշվի առնելու։ Դարվինը ինքը նշում է, որ բնական ընտրությունը ֆիկցիայի կվերածվի, եթե հաշվի չառնվի այն հանգամանքը, որ նոր հատկանիշի հանդես գալու ժամանակ, ինչպիսին էլ որ լինի նրա բնույթը, նրան սովորաբար հատուկ է սերունդներին ժառանգաբար անցնելը։

Դարվինի ուսմունքի համաձայն, կենսապայմաններում անհատի փոփոխականությունը որոշում է սերնդի, դրանով իսկ ցեղի փոփոխականության ուղղությունը։ Եթե նախնիների ու սերունդների և յուրաքանչյուր հետագա սերնդի փոփոխությունները բոլորովին կապված չլինեին իրար հետ, անհատական և ցեղի փոփոխությունները կլինեին միանգամայն ինքնուրույն և իրարից անկախ, հետևապես ընտրության ստեղծագործական գործունեությունը, այս կամ այն սերնդի անհատների պահպանման ճանապարհով բոլորովին կլիկվիդացվեր հետևյալ իսկ սերունդներում, որտեղ փոփոխությունները կգնային բոլորովին այլ ուղղությամբ։ Մինչդեռ օրգանիզմների հատկությունները շարունակվում են փոխվել նույն ուղղությամբ, որով նրանք փոփոխվել էին սկզբում։ Որոշակի պայմաններում անհատական շեղումների յուրահատկությունները որոշում են սերնդի հետագա շեղումների ուղղությունը նման պայմաններում։

Այսպիսով՝ Դարվինի ուսմունքի համաձայն, տեսակառաջացման պրոցեսը իրականանում է նոր օգտակար հատկանիշների ու

հատկությունների սերնդից սերունդ աստիճանական կուտակմամբ։

Առաջին անգամ Դարվինն է հավաքել ձեռքբերովի հատկությունների ժառանգման մասին վկայող մեծ թվով փաստեր։ Այդ պրոբլեմի շարադրմանը և փաստերի վերլուծմանը նա մեծ տեղ է նվիրել իր «Прирученные животные и возделанные растения» աշխատության մեջ։ Դարվինը չի տատանվել օնտոգենեզում օրգանիզմների ձեռք բերած հատկությունների և հատկանիշների ժառանգական բնույթի ընդունման մեջ, այլ ընդհակառակը, դա համարել է իր համար միանգամայն անվիճելի և ելել է դրանից, որպես իր տեսության ամենագլխավոր դրույթից։

Դարվինը նշել է, որ հանդես եկող նոր հատկությունը սովորաբար դառնում է ժառանգական։ «...Ընդհանուր առմամբ,—գրում է Դարվինը,—կարելի է ասել, որ հատկանիշների ժառանգումը կանոն է, իսկ չժառանգումը՝ բացառություն»[1]։

Արտաքին պայմանների դերի և օրգանիզմների կողմից ձեռք բերված փոփոխությունների ժառանգման դերի ճանաչումը կազմում է դարվինյան ընտրության ուսմունքի հիմքը։ Այդ 2 հիմնական դրույթները կազմում են Դարվինի բնական ընտրության մասին ուսմունքում տրված օրգանական նպատակահարմարության մատերիալիստական բացատրության էությունը։

Ձեռքբերովի հատկանիշների ժառանգման պրոցեսը բացատրելու համար Դարվինը առաջ է քաշել «պանգենեզիսի» տեսությունը։

Նախքան այդ տեսության անցնելը, անհրաժեշտ է նշել, որ Դարվինը ձեռքբերովի հատկանիշների ժառանգման պրոբլեմի վերլուծմանը մոտեցել է ո՛չ թե որպես էքսպերիմենտատոր, այլ որպես տեսաբան։

Պանգենեզիսի հիպոթեզում Դարվինը փորձում է կոնկրետ ցույց տալ փոփոխությունների ժառանգման մեխանիզմը և նշել այն ուղիները, որոնցով արտաքին պայմանների ազդեցությունը կարող է հասնել օրգանիզմի վերարտադրողական սիստեմին։

Այդ հիպոթեզի համաձայն, օրգանիզմի բոլոր մասերից, բոլոր բջիջներից անջատվում են առանձին մասնիկներ՝ գեմուլներ, որոնք շրջանառության մեջ գտնվելով օրգանիզմում, հոսում են դեպի

1 Ч. Дарвин, Прирученные животные и возделанные растения, Собр. соч., т. III, изд. Поповой, 1900, էջ 281.

սեռական կամ վերարտադրողական սիստեմը և մասնակցում նրա ձևավորմանը։

Հոդվածում բերված են Հայկական ՍՍՌ-ում հայտնաբերված մելանկոնիալ սնկերի ցեղերի, տեսակների նկարագրությունները, յուրաքանչյուր պարազիտի պատճառով հիվանդությունների արտաքին հատկանիշները, հայտնաբերման տեղը Հայկական ՍՍՌ-ում։ Ամենավնասակար տեսակների համար բերված են գրականության մեջ առաջարկված պայքարի միջոցները։ Նկարագրած պարազիտային սնկերի նմուշները գտնվում են Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետական համալսարանի բույսերի մորֆոլոգիայի և սիստեմատիկայի ամբիոնի հերբարիումում։

Վերը բերված տվյալները ցույց են տալիս, որ հետագա ավելի մանրամասն ուսումնասիրությունները՝ հիվանդությունների գլխավոր հարուցիչների տեսակային կազմի, նրանց բիոլոգիայի, հասցրած վնասի չափի և նրանց դեմ պայքարի միջոցների մշակման հարցը չափազանց ակտուալ է։

Բույսերի մորֆոլոգիայի և սիստեմատիկայի ամբիոն

А. Г. Тер-Погосян и С. А. Микаелян

ПШЕНИЧНАЯ НЕМАТОДА ANGUILLULINA TRITICI (STEINBUCH, 1799) FILIPJEV, 1936 В НЕКОТОРЫХ РАЙОНАХ АРМЕНИИ

До самого последнего времени в Армянской ССР не занимались изучением растениеядных нематод—вредителей сельского хозяйства, хотя с установлением советской власти в России за это дело взялись очень энергично.

Когда первый из соавторов настоящей статьи, еще в 1942 году, выступил с докладом на научной сессии Ереванского гос. университета имени В. М. Молотова на эту тему[1], в специальной литературе, в одной из работ Кирьяновой, только упоминалось о нахождении пшеничной нематоды в Армении. Имея в виду это обстоятельство и учитывая вред, наносимый пшеничной нематодой сельскому хозяйству, докладчик остро поставил вопрос о необходимости изучения распространения пшеничной нематоды в Армении. Необходимость эта подтверждалась тем, что им было получено несколько проб пшеницы с галлами нематоды из карантинной инспекции Наркомзема Армении, собранных из ряда районов (Ахурянского, Талинского, Степанаванского, Иджеванского и Басаргечарского). Факт наличия в Армении пшеничной нематоды стал очевидным, хотя ни степень зараженности, ни ареал распространения никем не были отмечены.

Необходимость обследования всей территории Армении в отношении распространения нематод сельскохозяйственных культур становилась неотложной задачей. За это дело, как и следо-

1 Нематоды—вредители сельхоз. растений и необходимость их изучения в Армении. Ереван, 1943 г. (на арм. языке). Научные труды Ереванского гос. университета им. В. М. Молотова, т. XXII, стр. 177—207.

вало ожидать, взялся Зоологический институт АН Армянской ССР в лице двух старших научных сотрудников А. Г. Тер-Погосяна и Э. Е. Погосян, которые начали с изучения нематод огородно-бахчевых культур. Кафедра же зоологии Ереванского гос. университета, в лице первого соавтора этой работы, в 1952/53 учебном году внесла в свой план пункт об обследовании злаковых культур Армянской ССР, начав с пшеницы. Работа велась в продолжение лета 1952 года в Степанаванском и Алавердском районах. Всю экспедиционно-полевую работу и сбор материала выполнял второй соавтор С. А. Микаелян.

Зараженные пшеничной нематодой колосья легко определяются по внешнему виду, но встречаются подчас и такие, которые внешне (по величине колоса и по остям) не отличаются от здоровых. Гораздо легче распознавать зараженные колосья в фазе полного цветения и особенно молочной спелости, когда ясно выражается деформация вегетативных частей.

Одновременно с полевым обследованием велась работа и на току, где производилась проверка зерна, вышедшего непосредственно из молотилки и веялки; при необходимости проверялся и семенной материал на складах.

В результате обследования Степанаванского района выяснилось наличие пшеничной нематоды на полях 11 из 29 проверенных колхозов.

Результаты обследования приведены в нижеследующей таблице.

Таблица 1

Результаты обследования распространения нематод в Степанаванском и Алавердском районах

№№ п/п	Наименование сёл	Пораженность нематодой по сортам		
		сорт пшеницы	яровая	озимая
1	2	3	4	5
1	Калинино	Украинка	—	—
2	Привольное	"	—	+
3	Каракилиса	"	—	—
4	Сарчапет	"	—	+
5	Кизилдаш	"	—	+
6	Норашен	"	—	+
7	Михайловка	Эритроспермум	+	—

Продолжение табл. 1

1	2	3	4	5
8	Эвлу	Украинка	—	+
9	с. Шахназар. колхоз им. Микояна	Украинка, Армянка		+
10	с. Шахназар, колхоз им. Молотова	Украинка, Армянка		+
11	Кизилшафак	Украинка	—	—
12	Илмазлу	Армянка	—	+
13	Медовка	Украинка, Армянка	—	—
14	Благодарное	Украинка	—	—
15	Саратовка	„	—	+
16	Степанаван	„	—	—
17	Кирово	„	—	—
18	Гюлагарак	„	—	—
19	Пушкино	„	—	—
20	Свердлов	Армянка	—	+
21	Урут	Украинка, Армянка	—	—
22	Леджан	„	—	—
23	Агарак	„	—	—
24	Ягдан	Украинка	—	—
25	Когес	Украинка, Армянка	—	—
26	Куртан	Армянка	—	—
27	Катнагбюр	Украинка	—	—
28	Куйбышев	„	—	—
29	Вартаблур	Украинка, Армянка	—	—

(+) отмечается присутствие нематоды.

Для составления некоторого представления о степени зараженности из сел Привольное и Сарчапет были взяты по 3 пробы весом каждая в 1 кгр. При этом образцы пшеницы брались непосредственно после молотьбы, до повторных зерноочисток. Учет зараженности проводился путем отбора галлов вручную с последующим подсчетом количества их в каждой пробе.

Результаты подсчетов сведены в следующей таблице 2.

Таблица 2

Количество и вес галлов в пробах зерна из сел Привольное и Сарчапет

Наименование сёл	К-во проанализированных проб	Вес пробы в гр.	Среднее количество галлов в пробе	Средний вес галлов в пробе в граммах
1. Сарчапет	3	1.000	76,3	0,6
2. Привольное	3	1.000	6,6	0,05

Приведенные в этой табличке данные не соответствуют данным истинной потери урожая. В действительности потери значительно выше, так как часть зараженных нематодами растений обычно погибает задолго до колошения.

Помимо Степанаванского района был обследован и Алавердский район (бывш. Ноемберянский район). Во взятых здесь 66 пробах пшеницы, весом каждая в 1 кг (сортов «Краснодарка», «Комбор» и «Украинка») из колхозов сел Арчис, Керпилу, Калача, Кохб, Ноемберян, Джуджеван, Кошкотан, Котигех, Достлу и Воскепар галлы пшеничной нематоды не обнаружены.

При частичном обследовании некоторых сел Апаранского и Аштаракского районов на пшеничную нематоду таковая также не обнаружена.

Приведенные в этой статье предварительные данные говорят о необходимости как повторного обследования полей уже обследованных колхозов для уточнения и определения процента зараженности, так и полей колхозов других районов республики, причем основное внимание необходимо уделять полевым обследованиям.

Факты и имеющиеся сведения говорят о том, что все районы Армении должны быть тщательно обследованы не только по пшеничной, но и по всем растениеядным нематодам.

Для ограничения распространения нематоды в дальнейшем необходимо тщательно очищать посевной фонд семян от галлов. Наиболее верным средством, как показывает опыт не-

которых колхозов Степанаванского района (сел Шахназар, Медовка, Калинино), является очистка семян вручную. Однако при огромных партиях семян и сжатых сроках сева очистка вручную вряд ли возможна, а посему рекомендуется производить удаление галлов при помощи триера, который, по данным Кирьяновой (1944), очищает семена на 95—97%.

Отходы, полученные после очистки триером и при отвеивании зараженного зерна, можно использовать в животноводстве и птицеводстве как корм только после запаривания кипятком.

Также необходимо строго соблюдать установленные севообороты, не допуская возвращения пшеницы на те же поля раньше установленного срока (2—3 года).

ВЫВОДЫ

Суммируя результаты обследования, мы приходим к следующим выводам:

1) Наши предварительные данные достаточно определенно утверждают факт присутствия пшеничной нематоды в пределах Армении.

2) Учитывая вред, наносимый пшеничной нематодой сельскому хозяйству, необходимо систематически и планово обследовать все районы Армении.

3) Источником заражения является посевной материал, поэтому необходимо соблюдать крайнюю осторожность при ввозе его извне и производить тщательную очистку триером.

Кафедра зоологии.

ЛИТЕРАТУРА

1. Архангельский Е. Н.—К вопросу о распространении пшеничной нематоды (tritici Steinbuch) Anguillulina в Киргизской ССР. „Защ. раст.", т. XIX. 1939.
2. Кирьянова Е. С.—Нематодная болезнь пшеницы и борьба с ней. Изд. Наркомзема СССР, 1937.
3. Кирьянова Е. С.—Пшеничная нематода. Листовка по нематодам № 1, ВИЗР, Сельхозгиз, Ленинград, 1938.

4. Кирьянова Е. С.—Обзор изученности нематодных болезней растений в СССР (Сборник работ по нематодам с/х растений. Сельхозгиз). М.—Л., 1939.
5. Кирьянова Е. С.—Растениеядные нематоды Таджикистана. (Изд. Тадж. фил. АН, СССР № 5). 1944.
6. Мейер А. А.—Пшеничная угрица [Anguillulina (Tilenchus) tritici Steinbuch] в Крыму по данным анализа образцов зерна озимых пшениц урожая 1939 г. Сборн. работ по нематодам с.-х. растений. Сельхозгиз. М.—Л., 1939.
7. Свешникова Н. М.—Испытание сухого прогревания пшеницы в целях борьбы с пшеничной нематодой. „Соц. зерновое хозяйство". 6. Саратов, 1939.
8. Тулаганов А. Т.—Пшеничная нематода—Anguillulina tritici Steinbuch, как серьёзнейший вредитель пшеницы в Узбекистане. Тр. Уз. ГУ. Серия № 26, выпуск 18, 1941.

ՑՈՐԵՆԻ ՎՆԱՍԱՏՈՒ ՈՐԴԸ—ANGUILLULIVA TRITICI (STEINBUCH, 1799) FILIPJEV 1936 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻ ՔԱՆԻ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Ամփոփում

Գյուղատնտեսական բույսերի վնասատու որդերի ուսումնասիրությունը Հայաստանում միայն վերջին տարիներս է սկսվել: 1952/53 ուսումնական տարում մեր կողմից հետազոտվել է ցորենի վնասատուի առկայության խնդիրը Հայաստանում և պարզվել է, որ Ստեփանավանի շրջանի հետազոտված 29 կոլտնտեսային գյուղերից 16-ը որդ-ճիվով խիստ վարակված է։

Անհրաժեշտ է Հայաստանի բոլոր շրջանները պլանաչափ հետազոտել ու պարզել այդ վնասատուի տարածվածությունը, և սուր կերպով պայքար կազմակերպել մաքուր սերմացուի համար. երբեք անմաքուր, ցորենանման թուխ հատիկներ՝ գալլեր ունեցող ցորենը հողը չգցել։ Սերմացու ցորենը նախապես պետք է մաքրել գալլերից տրիերի միջոցով, իսկ փոքր քանակի դեպքում կարելի է և ձեռքով ընտրել-մաքրել[1]։ Մի անգամ վարակված հողը այլևս շատ դժվար է մաքրել։

Կենդանաբանության ամբիոն

---

[1] *Անհրաժեշտ է նաև խիստ հետևել սահմանված ցանքաշրջանառություններին, թույլ չտալով ցորենի ցանքը կատարել նույն հողամասում նշանակված ժամկետից (2—3 տարի) ոչ շուտ*

Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետ. համալսարանի գիտ. աշխատություններ
Научные труды Ереванского государственного университета им. В. М. Молотова
49 1955

Ա. Ռ. Պողոսյան

ՆՅՈՒԹԵՐ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ-ՈՒՄ ՏԱՐԱԾՎԱԾ ՃԱԳԱՐԱՄԿՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գրականությունից հայտնի է, որ կրծողների կարգի մեջ մըտնող ճագարամկների ընտանիքից 2 տեսակներ տարածված են Հայաստանում, բայց թե դրանցից ո՞ր տեսակը, ո՞ր շրջաններում, ի՞նչ խտությամբ է տարածված և ինչպիսի՞ ստացիաներում է բնակվում, այդ ամենը դեռևս չի պարզված։ Առանձնապես չի ուսումնասիրված փոքրասիական ճագարամկան էկոլոգիան, իսկ փոքր ճագարամկան մասին եղած տեղեկությունները էլ լրիվ չեն։

Ուստի, ինչպես Երևանի հարթավայրում, նույնպես և ամբողջ Հայաստանում տարածված այս կրծողների էկոլոգիայի ուսումնասիրությունը շատ կարևոր է թե՛ գյուղատնտեսության և թե՛ առողջապահության տեսակետից։

Նախընթաց տարիներին ուսումնասիրվել են առավել վնասակար կրծողները, բացառությամբ ճագարամկների։ Այստեղ մենք փորձում ենք լրացնել այդ բացը։

*Ճագարամկների (*Dipodidae*) ընտանիքի մեջ մտնում են շատ յուրահատուկ կրծողներ, որոնք հարմարվել են բաց տարածություններին՝ կիսանապատներին, անապատներին, տափաստաններին։*

Այդ պայմանների ազդեցության հետևանքով, նրանք ձեռք են բերել արագաշարժություն, հատկապես լավ վազում են հետին ոտներով ցատկումներ կատարելով։ Ցատկումներով վազքի հետևանքով նրանց հետին ոտների թաթերը շատ երկարել են։ Կողքերի երկու մատները համեմատաբար թույլ են զարգացած, կամ որոշ տեսակների մոտ բոլորովին անհետացել են։

Ճագարամկների մեծ մասի պոչը երկար է, ծայրին ունեն նշտարաձև փունջ, կազմված ավելի երկար սև ու սպիտակ մազերից։ Առջևի վերջավորությունները սովորաբար շատ կարճ են և

ծառայում են բույն փորելուն, ուտելու ժամանակ կերը բռնելուն, բայց ոչ երբեք քայլելուն կամ շարժվելուն։

Այս ընտանիքի մեջ մտնում են մի շարք ենթաընտանիքներ և սեռեր, այդ թվում նաև Allactaginae ենթաընտանիքը՝ Allactaga սեռով։

Այս սեռի կենդանիների սեղանատամները $\frac{4}{3}$ կամ $\frac{3}{3}$ են։

Գանգի ներքին ակնախոռոչային անցքը լայնացած է։

Ականջները երկար են, առաջ թեքվելիս սովորաբար անցնում են քթի ծայրից։ Հետին ոտները առաջիններից 3—4 անգամ ավելի երկար են. ունեն հինգ մատներ, առաջին և հինգերորդ մատները կարճ են և չեն հասնում երրորդ մատի ծայրին։ Մատների ներքին մակերեսը մերկ է կամ հազվադեպ ծածկված է լինում նոսր մազով։

Գանգը նեղացած է, իսկ հետևից լայնացած, որով դարձել է սեղանաձև։ Թմբուկոսկրերը սովորաբար թույլ են ուռած։ Allactaga սեռը կամ ճագարամկները 9 տեսակ են, որոնցից 6-ը տարածված են ՍՍՌՄ-ում։ Բոլոր տեսակներն էլ տիպիկ կավավազային և խճավազային անապատների, կիսանապատների ու տափաստանների բնակիչներ են։

Ըստ գրականության [3], ոչ շատ տեսակներ որոշ տեղերում գյուղատնտեսությանը (հացահատիկային, բոստանային, բանջարանոցային և տեխնիկական կուլտուրաներին) վնաս են պատճառում։ Իսկ ավելի խոշոր տեսակները մորթու արդյունագործական նշանակություն ունեն։ Շատ տեղերում, ըստ երևույթին մյուս կրծողների հետ միասին, ճագարամկներն էլ մարդկանց և ընտանի կենդանիների մի շարք հիվանդությունների տարածողներն են հանդիսանում։ Հայաստանում այս ընտանիքի ներկայացուցիչները մինչև վերջերս չէին համարվում վնասակարներ, բայց դիտողությունները ցույց են տվել, որ նրանք ևս մյուս կրծողների հետ միասին Հայաստանի պայմաններում նույնքան վնասակար են, ինչքան մնացած կրծողները (օրինակ՝ ավազամկները, դաշտամկները և այլն), բայց որովհետև սրանք մասսայաբար հանդես չեն գալիս, ինչպես մյուսները, այդ պատճառով աչքի չեն ընկնում։

Այս կրծողների վնասակարությունը և էկոլոգիան ուսումնասիրելու նպատակով՝ մենք հետազոտել ենք առաջին հերթին Երևան քաղաքի շրջակայքը (Կարմիր բլուր, Հայկական ՍՍՌ-ի Գիտությունների ակադեմիայի Գյուղատնտեսական գիտությունների բաժանմունքի Փարաքարի բազան, Ջրվեժի դաշտերը, Երևանի Կոմ-

սոմոլի այգու լճի շրջապատի բլուրները, Նորքի և Ավանի լանջերը և էջմիածնի, Հոկտեմբերյանի, Շահումյանի շրջանների կիսանապատային տարածությունները։

Մեր դիտողությունների ժամանակ պարզվեց, որ Երևան քաղաքի շրջապատում և նրա մոտակա շրջաններում, բացի փոքր ճագարամկներից (Allactaga elater) տարածված են նաև մեծ ճագարամկներ (Allactaga williamsi), իսկ գրականության մեջ [1] այն կարծիքը կա, թե մեծ ճագարամկները տարածված են Հայաստանի լեռնային շրջաններում, և մասամբ էլ Հոկտեմբերյանի (Նախկին Սարդարաբադի) տափաստանում։

Մեր դաշտային աշխատանքների ընթացքում հավաքված և ուսումնասիրված են 30 ճագարամուկ. բացի դրանից, զննվել ու տեքստում աղյուսակների համար նյութ է վերցրվել նաև Հայկական ՍՍՌ-ի Գիտությունների ակադեմիայի Կենդանաբանական ինստիտուտի կոլեկցիայից։ Երևանի Վ. Մ. Մոլոտովի անվան պետական համալսարանի կենդանաբանական ամբիոնի լաբորատորիայում պահված մեծ ճագարամկների վրա կատարվել են լաբորատոր դիտողություններ։

Այս թեմայի կատարման աշխատանքներին օգնել են կենդանաբանական ամբիոնի ասիստենտ Ռ. Հյուսյանը, ավագ լաբորանտներ՝ Գ. Մանուչարյանը, Ռ. Վասիլյանը և Հայկական ՍՍՌ-ի Գիտությունների ակադեմիայի Կենդանաբանական ինստիտուտի ողնաշարավորների սեկտորի լաբորանտ Ս. Բորյանը, որոնց հայտնում եմ իմ շնորհակալությունը։

ՓՈՔՐԱՍԻԱԿԱՆ ՃԱԳԱՐԱՄՈՒԿ
Allactaga williamsi Thom (1897)

Ըստ Բ. Ս. Վինոգրադովի և Ի. Մ. Գրոմովի [4], փոքրասիական ճագարամուկը (A. williamsi) իր չափերով՝ A. jaculus-ի և A. elatr-ի համեմատությամբ միջին տեղն է բռնում, հետին թաթի երկարությունը 62—68 մմ է, գանգի երկարությունը՝ 30,2—31,7 մմ, մորթու գույնը ժանգագորշ-մոխրագույն է, պոչի ծայրի փնջի վերին կողմում սև սահմանից դեպի առաջ մուգ տարածություն կա։

Ըստ մեր նյութերի, այս կենդանու չափերը հետևյալ պատկերն է ներկայացնում՝ մարմնի երկարությունը 127—146 մմ է, պոչինը՝ 125—240 մմ, ականջինը՝ 35—48,5 մմ, հետին թաթինը՝ 62—72,5 մմ, գանգինը՝ 31,7—36,5 մմ, չափումների պատկերը

Աղյուսակ 2

Փոքրասիական ճագարամկան մարմնի և գանգի չափումները, որ կատարել ենք մենք Հայկական ՍՍՌ-ի Գիտությունների ակադեմիայի Կենդանաբանական ինստիտուտի կոլեկցիայի նյութերի վրա

Մարմնի երկարությունը՝ նվազագույն 127, միջին 136, առավելագույն 146

Չափումները մմ-ով (13 օրինակ)	127—130	131—133	134—137	138—141	142—145	146—149
Քանի հատ	3	—	4	5	—	1

Հետին թաթի երկարությունը՝ նվազագույն 62, միջին 68,3, առավելագույն 72,5

Չափումները մմ-ով (12 օրինակ)	62—65	66—69	70—73
Քանի հատ	2	5	5

Պոչի երկարությունը՝ նվազագույն 125, միջին 212, առավելագույն 240

Չափումները մմ-ով (13 օրինակ)	125—135	136—145	146—155	156—165	166—175	176—185	186—195	196—205	206—215	216—225	226—235	235—240
Քանի հատ	1	—	—	—	—	1	—	1	2	3	4	1

Ականջի երկարությունը՝ նվազագույն 35, միջին 44,5, առավելագույն 51

Չափումները մմ-ով (13 օրինակ)	35—40	41—45	46—50	51—55
Քանի հատ	3	6	3	1

Գանգի երկարությունը՝ նվազագույն 31,7, միջին 34,4, առավելագույն 36,5

Չափումները մմ-ով (13 օրինակ)	31—35	35,5—38
Քանի հատ	8	5

Allactaga williamsi-ի մարմնի և գանգի չափումների աղյուսակ 1

Ինվենտարի №№	Նյութերի հավաքի վայրը և ժամանակը	Ապրելավայրը (ստացիան)	Մարմնի չափումները միլիմետրերով					Սեռը	Գանգի չափումները										
			մարմինը	պոչը	թաթը	ականջը	քաշը		գանգի ընդհանուր երկար.	կոնդիլոբազալ երկար.	դիմային մասի երկար.	ուղեղային մասի երկար.	միջաչքային մասի երկար.	քթային մասի երկար.	ատամնատամների շարքի երկար.	այտոսկրերի լայնությունը	գանգի ամենալայն մասը	գանգի բարձրությունը	գանգի բարձր. հիմն. ծոծրակոսկրի
5278	Աղիրբեկովի և Կուսկիրդաղի հյուսիսային լանջերը 11.7—46 թ.	Յայլաներում	136,5	213,0	72,5	48,5	106	♂	35,2	3[illegible],6	20	13,3	9,5	10,3	7,1	21,4	19,5	13,8	11,7
3714	Աշտարակի շրջանի Դովլի գյուղ 15/8—43 թ.	Հացահատիկա. դաշտերի մոտ չոր լանջեր.	140	220	68,0	45,0	108	♂	35,2	32,6	1[illegible],5	13	9,9	9,2	7,2	24	19	14	11,4
5517	Հոկտեմբերյանի շրջանի Շամասու գյուղի 10.8—48 թ.	կիսանապատ	134	228	68,6	41,5	92,0	♀	33,4	31,8	18,6	12,1	9	8,8	7,1	23	18,5	13,1	12,5
3945	Զրվեժ 25.4—16 թ.	»	146	227	70	47,0	101,0	♀	3[illegible],9	33,5	20,1	13,5	9,7	9,6	7	24,7	19,4	13,2	10,5
229	Ալագյազի շրջանի Ալագյազ գյուղ 16,9—43 թ.	Լեռնային արոտավայր	130	230	69	44	95	♀	35	32,6	19	13,4	9,6	10,5	6,9	23,1	18,5	14,3	11
237	Ալագյազի շրջանի Ալագյազ գյուղ 16/9—43 թ.	»	140	125	65	40	89	♂	33	30,8	18,3	12,2	9	8,5	7	23	17,5	13,2	10,3
228	Կոտայքի շրջանի Գոխտ գյուղ 8 9—45 թ.	կիսանապատային	136	227	67	47	90,7	♂	33,7	32	18,5	12,1	9,5	8,8	6,7	22,6	18	12,7	10,2
240	Արթիկի շրջանի Հառիճ գյուղ 6/9—43 թ.	Դաշտ	135	180	62	35	72	♂	33,9	31	17,8	12,8	8,85	5,6	6,8	24	18,2	13,8	10,5
5518	Հոկտեմբերյանի շրջանի Շամասու գյուղ 10/8—48 թ.	կիսանապատ	139	210	66,2	43	107	♀	34,8	32,7	19,3	13,5	9,2	10,5	6,7	23,6	17,9	13,5	10,5
233	Կոտայքի շրջանի Գոխտ գյուղ	կիսանապատ	140	230	71	51	115	♀	36,5	34	19,8	14,1	10	10,6	7	24,3	17,8	13,4	13,1
5316	Ապարանի շրջան 18 6—47 թ.	Մարգագետն.	140	240	70	40	105	♀	35,7	32,5	19,3	13,6	9,2	10,6	7	24,1	18,1	13,5	11,9
238	Թալին 8,8—43 թ.	Դաշտ	130	200	70	45	105	♂	33,8	31	18,2	12,6	9	9,8	6,9	—	17,6	13,5	10

Աղյուսակ 3

Փոխրաsիական ճագարամկան մարմնի և գանգի չափումները
(միլիմետրերով)

Ցուցանիշները	Նվազագույն	Միջին	Առավելագույն
Մարմնի երկարությունը	127	136	146
Պոչի »	125	212	240
Ականջի »	35	44,5	48,5
Հետին թաթի »	62	68,3	72,5
Գանգի »	31,	34,4	36,5

ավելի լրիվ լինելու նպատակով բերում ենք № 1 աղյուսակը, որի հիման վրա կազմել ենք նաև նվազագույն, միջին և առավելագույն չափերը, որոնք արտահայտվում են № 2 և № 3 աղյուսակներում (տե՛ս աղյուսակներ №№ 1,2,3)։

Բերված թվերը ցույց են տալիս, որ Հայաստանում տարածված A. williamsi ճագարամուկն իր չափերով շատ տարբերվում է մյուս վայրերում տարածված նույն տեսակից։

Հայաստանում տարածվածը շատ ավելի խոշոր է։ Այդ են ասում մարմնի բոլոր չափումները և կարևոր հատկանիշների ուսումնասիրությունները։

Ըստ Վինոգրադովի և Գրոմովի [4], այս տեսակի մորթու գունավորությունը ժանգա-գորշամոխրագույն է, թույլ դեղին գույնի խառնուրդով։ Ընդհանուր առմամբ նման գունավորություն ունեն նաև Հայաստանում տարածվածները, բայց ըստ նրանց տարածման գոտիների նկատվում են որոշ տարբերություններ։ Այսպես, ցածրադիր վայրերում, այսինքն՝ ծովի մակերևույթից մինչև 900 մետր բարձրություն ունեցող տեղերից (Երևանի շրջապատ, Հոկտեմբերյանի շրջան, Կարմիր բլուր) հավաքած ճագարամկների (№ 1 աղյուսակում բերված Հայկական ՍՍՌ-ի Գիտ. ակադեմիայի Կենդանաբանական ինստիտուտի գույքային համարների 5517, 5518 կենդանիները) մորթու գունավորությունը շատ բաց է, 900—1200 մետր բարձրություն ունեցող վայրերից (Աշտարակ, Ջրվեժ) հավաքվածներինը (№ 3945) ավելի մուգ, իսկ 1200—2500 մետր, այսինքն՝ ամենաբարձրադիր կետերից (Ազիզբեկով, Ալագյազ, Սպիտակ) հավաքվածների (5278, 229, 237, 5316) գույնը շատ ավելի մուգ է և մոտենում է սևին, ավելի ճիշտ՝ գորշասևին։

Այդ երևույթը մեր ուշադրությունը գրավեց Հայկական ՍՍՌ-ի Գիտությունների ակադեմիայի Կենդանաբանական ինստիտուտի կոլեկցիան զննելիս։

Ճագարամկների մորթու մազերի երկարությունը բավականին հետաքրքիր պատկեր է ներկայացնում. ցածրադիր վայրերից հավաքված կենդանիների մազերը շատ կարճ են, իսկ ավելի բարձրադիր վայրերից հավաքվածներինը՝ երկար։

Այդ երևույթը, իհարկե, ունի իր բնական-ֆիզիոլոգիական պատճառները և բացատրելի է. տաք և ցածրադիր վայրերի կաթնասունների մարմնի մազերը կարճ են լինում, իսկ ցուրտ և բարձրադիր վայրերի կաթնասուններինը՝ երկար։

Փոքրասիական ճագարամուկը, ըստ գրականության [5], տարածված է Փոքր Ասիայում. Ադրբեջանում (Ջուլֆա, Օրդուբադ, Թալիշի լեռնաշղթա, Ապշերոնյան թերակղզի), Կովկասյան լեռնաշղթայի արևելյան մասի տափաստաններում, մինչև Խաչմազ։ Հայաստանում այս կենդանին տարածված է Հոկտեմբերյանի կիսանապատում, Արագածի հարավային լանջերին, Սևանի արևելյան ափերին, Կիրովականի շրջանում։

1941 թվականից մեր կողմից կատարված հավաքի և Կենդանաբանական ինստիտուտի կոլեկցիայի դիտողությունների համաձայն, փոքրասիական ճագարամուկը տարածված է նաև Երևան քաղաքի շրջապատում (Կարմիր բլուր, Նորքի լանջեր, Ջրվեժի և Ավանի դաշտեր), Շահումյանի, Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Կոտայքի, Ազիզբեկովի, Աշտարակի, Վեդիի, Արտաշատի, Լենինականի, Արթիկի, Սպիտակի, Ալագյազի շրջաններում։ Բոլոր այդ վայրերում նա տարածվում է ծովի մակերևույթից մինչև 2500 մետր բարձրությամբ։

Սրանց ապրելավայրը (ստացիան), բոլոր այդ շրջաններում, բաց տարածություններն են. ցածրադիր և նախալեռնային վայրերում՝ կավավազային կիսանապատները, ուր բույսերից իշխում են շռանը, Երևանյան օշինդրը, հազարատերևուկը և այլն, իսկ բարձրադիր վայրերում՝ տափաստանները, արոտավայրերն ու մարգագետինները։ Օրինակ՝ շատ բնորոշ է, որ վերը հիշատակված ցածրադիր շրջաններում՝ Արարատյան հարթավայրում, նրանք ապրում են ոչ շատ մեծ կիսանապատային մասսիվներում, որոնց ընդհանուր տարածությունը երբեմն նույնիսկ 10—15 հեկտարից չի անցնում և հենց այդ մասսիվները ընկած են լինում լավ մշակվող, ջրովի հողերի ու խաղողի այգիների միջև։ Այսպիսի պատկեր է

ներկայացնում Կարմիր բլուրը, Փարաքար գյուղի շրջապատը, Զվարթնոցի, Այղր լճի շրջապատում եղած բլուրները, Արշալույս գյուղի այգիների շրջապատը։ Այդ տեղերից կեր ճարելու համար նրանք մտնում են շրջապատի այգիները, բամբակի դաշտերը, արտերը և վնասում նրանց։ Ըստ երևույթին, հատկապես ցածրադիր շրջաններում, վերը նշված այս կենդանին անցյալում շատ լայն տարածում է ունեցել, բայց ժամանակի ընթացքում մարդու գործունեության հետևանքով կիսանապատային մասսիվները յուրացվել են և դրա հետևանքով էլ նրանք այդ վայրերից պակասել են և դեռևս պահպանվել են չյուրացված հողամասերում։ Այն մասսիվները, որոնց վրա կենտրոնացված են ցատկամկները, իրենցից ներկայացնում են կավի, ավազի և մասամբ էլ խճային խառնուրդով մասսիվներ, որոնք գունավոր, կարմիր, դեղին կավային բլրակներ ու բարձրություններ են ներկայացնում։

Ըստ Զթչյանի [7], Հոկտեմբերյանի հարթավայրում չյուրացված մասսիվները կազմված են մոխրագորշ, գորշ և տակիրային գանգվածներից։ Նույն հեղինակի վկայությամբ այդ տեղերում գրունտային ջրերը գտնվում են ավելի մեծ խորության տակ, քան մյուս մասսիվներում։ Այդ հանգամանքը, ըստ երևույթին, խոշոր նշանակություն ունի ինչպես այդտեղ ապրող ավազամկների, նույնպես և ճագարամկների համար։ Հենց դրանով պետք է բացատրել, որ ավազամկները և ճագարամկները Արարատյան հարթավայրում տարածված չեն այն վայրերում, ուր գրունտային ջրերը շատ մոտ են հողի մակերեսին։ Բայց նրանք կան այդ շրջանների չոր հողերում։ Արարատյան հարթավայրում այս կրծողը, կենտրոնացած լինելով կիսանապատային, կավավազային մասսիվներում, ապրում է նույն ստացիաներում կենտրոնացած ավազամկների և փոքր ճագարամկների հետ կողք-կողքի, նույնիսկ նրանց բներից կազմված գաղութների արանքում, այնպես որ շատ հաճախ ամենափորձված աչքն անգամ արտաքինից չի կարողանում տարբերել նրանց բնանցքերը, մանավանդ որ ավազամկներն էլ հաճախ բույնի անցքը հողով խցանում են, իսկ լեռնային շրջաններում նրանք ապրում են համստերների, դաշտամկների, անտառամկների, Լենինականի բարձրավանդակում նաև պոնտական մկան (суслик) հետ նույն ստացիայում։

Այդ նույն վայրերում տարածված փոքրասիական ճագարամկան բնի կառուցվածքը նույնիսկ նույն ստացիայում պատահող ավա-

զամկների բույների կառուցվածքի հետ համեմատած շատ պարզ է։ Ամբողջ բնանցքի խորությունը 45 սանտիմետրից չի անցնում։

Ըստ Արգիրոպուլի [1], ճագարամկների բնային կամերայի խորությունը հասնում է 75 սանտիմետրի, իսկ ամբողջ բնուղու երկարությունը՝ 170 սանտիմետրի։

Բույներն արտաքինից մեծ մասամբ մեկ անցք են ունենում, որի լայնությունը 9×9 սմ, 12×8 սմ, 10×9 սմ, 8×8 սմ չի անցնում, բույնի ամբողջ երկարությունը հասնում է մինչև 74—100 սմ։

Այս կրծողների բնանցքի մոտ և շուրջը կերի ոչ մի մնացորդ կամ էքսկրեմենտ չի լինում, բայց ցերեկները նրանք իրենց բնանցքը խցանում են ներսում եղած հողի ոչ մեծ քանակով։ Այդ նկատել ենք 1945—46 թվականներին, Կարմիր բլուրում եղած մեր էքսկուրսիաների և նյութերի հավաքի ժամանակ։ Այդպիսի երևույթ նկատել ենք նաև նույն ստացիայում ապրող ավազամկների մոտ։ Այդ խցանումները կիսանապատային միջավայրում ապրող այդ կենդանիներին պաշտպանում են ցերեկը ուժեղ շոգից ու թշնամիներից։ Սրանք գաղութներով չեն ապրում, բներն առանձնացված են։ Մեծ մասամբ նրանք բույներ կառուցում են վերը նշված մասիվներում եղած փոսերի ու ճանապարհների եզրերին, քարերի տակ և այլն։ Այդ տեսակետից շատ հետաքրքիր պատկեր է ներկայացնում Այղր լճի շրջապատի կիսանապատային մասիվը, որտեղ եղած փոսերի եզրերին այդ կրծողները պատրաստել են իրենց բույները։ Նույն երևույթը նկատվում է նաև մյուս վայրերում։ Ամենուրեք նրանք իրենց բույները հարմար դիրքով են կառուցում, այսինքն՝ պաշտպանված են լինում անձրևաջրերից ու քամիներից։

Փոքրասիական ճագարամուկը մյուս ճագարամկների նման ուշ աշնանը ձմռան քուն է մտնում և զարթնում է վաղ գարնանը։ Մեզ մոտ նրանց ձմեռային քունն սկսվում է հոկտեմբերի վերջերից։ 1951 թվականի նոյեմբերի 5-ին Փարաքարի կիսանապատային դաշտերից մեկում փորեցինք մեկ բույն, որի մեջ արդեն քուն էր մտել բնակիչը։ Քնած ճագարամկանը անմիջապես տեղափոխեցինք լաբորատորիա, ուր նա միայն առաջին մի քանի ժամը քնած մնաց, այնուհետև նա զարթնեց և այլևս չքնեց ամբողջ ձմռան ընթացքում։ Ամբողջ ձմռան ընթացքում նա ակտիվ կերակրվում էր, նույնիսկ ջուր խմում, հարձակվում էր ամառվանից լաբորատորիա բերված էգի վրա։ Լաբորատորիայում եղած մյուս ճագարամկները նույնպես ձմռան քուն մտնելու ոչ մի նշան ցույց չտվին, չնայած

որ նրանք այդտեղ 3 տարի շարունակ ապրում էին։ Այս բոլորը խոսում է այն մասին, որ ձմռան քունը այս կրծողների մոտ այնքան էլ խորը չէ, և տաք ու ոչ-խիստ ձմռանը նրանցից շատերը շատ կարճատև ձմռան քուն կարող են ունենալ, կամ ձմռան ընթացքում նույնիսկ որոշ օրեր կարող են բույնից դուրս գալ։

Ձմեռային քնից արթնանում են փետրվարի վերջերին, երբ դաշտերը դեռևս ձյունով են ծածկված։ Կենդանաբանության ամբիոնի ավագ լաբորանտ Գ. Մանուչարյանը 1954 թ. փետրվարի 25-ին և 26-ին Այղր լճի շրջապատի կիսանապատային տարածություններում ձյան վրա փոքրասիական ճագարամկան ոտքերի հետքեր է տեսել։

Օրվա մեջ այս կրծողները (A. williamsi և A. ellater) ակտիվ են գիշերները՝ արևը մայր մտնելուց հետո մինչև լուսաբաց, ցերեկները նրանք մտնում են բույները, ներսից հողի խցանով փակում անցքը և քնում մինչև երեկո, իսկ արևը մայր մտնելուց հետո դուրս են գալիս որսի։

Ըստ մեր դիտողությունների, այս կրծողները չափազանց զգույշ կենդանիներ են։ Բույների առջև դրված թակարդներից նկատելի կերպով խուսափում են. վտանգի դեպքում բույնից հանկարծակի դուրս են նետվում և մեծ ցատկումներով ոլոր-մոլոր փախչում, ցերեկը նրանց գրեթե անհնարին է բռնել, իսկ գիշերները նրանց կարելի է որսալ ավտոմեքենայի լապտերներով. էլեկտրական լույսի տակ նրանք անշարժանում են, այդ է պատճառը, որ նրանց բնակեցված վայրերում գիշերները մեծ քանակությամբ ընկնում են մեքենայի անիվների տակ։

Լաբորատոր պայմաններում երեք տարի շարունակ՝ 1950—53 թվականներին, մենք պահել և հետևել ենք նրանց կերին։ Այդ ժամանակամիջոցում պարզվել է, որ նրանք ամենից ախորժակով ուտում են արևածաղկի, սեխի, ձմերուկի, բամբակի կորիզները, հացահատիկներից՝ ցորենը, գարին, իսկ եգիպտացորենի հատիկները չեն ուտում, ըստ երևույթին նրանց կոշտության և պղպջակության պատճառով։ Ձմերուկի կորիզների կողքից փոքրիկ անցք բացելով և կտրիչներից մեկը ներս տանելով հանում են պարունակությունը։ Արևածաղկի սերմերն ուտում են կեղևը երկու կեսի բաժանելով, ինչպես, առջևի թաթերով ամուր բռնելով ուտելիքը։

Ըստ մեր հավաքած նյութերի, այս կրծողները ուտում են նաև իրենց շրջապատում աճած մոլախոտերը կամ անասնակերի համար

խոշոր նշանակություն ունեցող բույսերի սերմերը։ Գարնանը և ամռանը ուտում են նաև կանաչ կեր, բայց քիչ քանակությամբ։

Այս կրծողները, ըստ մեր կատարած դիտողությունների, բազմանում են տարեկան մեկ անգամ՝ գարնանը ապրիլի վերջերից մինչև մայիսի վերջերը և ունենում են մինչև 5 ձագ։ Այսպես, 1951 թ. ապրիլի 2-ին բռնված էգը մայիսի 3-ին լաբորատորիայում ծնեց 5 ձագ։ Գրականության մեջ այս կրծողի բազմացման մասին ոչ մի տեղեկություն չկա։

ՓՈՔՐ ՃԱԳԱՐԱՄՈՒԿ
Allactaga elater Lichtenstein (1825)

Փոքր ճագարամուկը (A. elater), ըստ Վինոգրադովի և Գրոմովի [4], ունի հետևյալ արտաքին հատկանիշները՝ մարմնի երկարությունը 95—115 մմ (հազվադեպ տատանվում է մինչև 29,7 մմ)։ Մորթու գույնը տատանվում է մոխրա-դեղնագորշից մինչև բացավազագույնը։

Ըստ Արգիրոպուլի [1], այս կենդանու մարմնի երկարությունը 93—118 մմ է, պոչինը՝ 142—176 մմ, թաթինը՝ 48—54,4 մմ, գանգինը՝ 27,7—29,7 մմ. ըստ մեր չափումների փոքր ճագարամկան մարմնի երկարությունը հասնում է 100—130 մմ, պոչի երկարությունը՝ 148—189 մմ, ականջի երկարությունը՝ 28,8—46 մմ, թաթի երկարությունը՝ 46—63 մմ, գանգի երկարությունը՝ 27,4—32,1 մմ։ Բացի այս չափումներից, մենք ունենք գանգի ավելի մանրամասն չափումներ, որոնք ցույց են տրվում № 4 աղյուսակում. այդ մանրամասն չափումների հիման վրա դուրս է բերված նաև № 5 աղյուսակի տվյալները (տե՛ս № 4 և № 5 աղյուսակները)։

Աղյուսակ 5

Փոքր ճագարամկան մարմնի և գանգի չափումները (միլիմետրերով)

Ցուցանիշներ	Նվազագույն	Միջին	Առավելագույն
Մարմնի երկարությունը	100	109,4	130
Պոչի »	148	166	189
Ականջի »	28,8	35,3	46
Հետին թաթի »	46	52,5	58
Գանգի »	27,4	29	32,1

Ինվենտարի №№	Նյութի հավաքի վայրը և ժամանակը	Ստացիան կամ ապրելավայրը	Մարմնի չափումները միլիմետրերով					Սեռը	Գանգի չափումները (միլիմետրերով)										
			մարմինը	պոչը	թաթը	ականջը	քաշը գ-երով		գանգի ընդհանուր երկար.	կոնդիլոբազալ երկարութ.	դիմային մասի երկարութ.	ուղեղային մասի երկարութ.	միջաչքային տարած. երկար.	քթային մասի երկարութ.	սեղանատամների շարքի երկարութ.	այտոսկրերի լայնությունը	գանգի ամենալայն մասը	գանգի բարձրությունը	գանգի բարձր. հիմնա.-ծոծ-րակոսկրի
5689	Վեդու շրջանի Վեդի գյուղ 7.5—43 թ.	Վեդիի գետի խճային ափը	100	172	50,7	31,7	44	♀	7,8	26	14,5	10,5	8,9	7,5	5	20	16	11,5	8,5
5309	Երևանի շրջակայք, Կարմիր բլուր 24/3—47 թ.	Կավավազային կիսանապատ	110,7	158	50	28,8	—	♂	28,2	26,1	14,8	11,1	10	8,1	5,1	—	16,7	11,9	8,8
5515	Վեդու շրջանի Թայթան գյուղ 2.8—48 թ.	Քարքարոտ կիսանապատ	115	175	53,4	33,5	56	♀	28,2	26,3	14,9	11,1	8,9	7,8	5,5	20,3	15,9	12,5	8,8
239	Թալինի շրջանի Կարմրաշեն գյուղ 19.4—43 թ.	Ժայռոտ-քարքարոտ կիսան.	110	170	54	33	50,5	♂	28,6	26,3	14,6	11,4	9,7	7,6	6,2	20,7	15,8	12	8,7
235	Էջմիածնի շրջանի Ջրվարթնոցի մոտերքում 16/7—42 թ.	Կիսանապատային տարածութ.	109	148	51	30	58,7	♂	28,4	26,7	15,3	11	9,6	7,5	5	2[illegible],5	16,5	12	9,5
5521	Հոկտեմբերյանի շրջանի Շավառուտ գյուղ 14/8—48 թ.	Կիսանապատ	96,6	154	47,5	31,7	51	♂	28,2	25,8	14,5	10,5	10	7,3	5	20,5	16,2	12	8,7
5522	Հոկտեմբերյանի շրջանի Շավառուտ գյուղ	Կիսանապատ	103	156	51	32,5	53	—	28,6	26,5	15	11,1	9,7	7,9	5,5	2[illegible],2	15,9	12,4	8,7
5519	Հոկտեմբերյանի շրջանի Շավառուտ գյուղ 10/8—48 թ.	Կիսանապատ	102	170	52	31,2	62	♂	28,7	27	16	11	10	7,5	5,5	21	15	11	10
230	Էջմիածին 28/11—34 թ.	Ոչ-ազատ պայմաններում պահված	110	168	58	37	—	—	29,[illegible]	26,8	15	1[illegible],7	10	8,2	5,2	21,7	15,9	12,4	8,8
5511	Վեդու շրջանի Ենիքենդ գյուղ 31/7—48 թ.	Վեդիի գետի ափին	110	165	52	32,3	54	♂	29,2	26,7	15,5	10,8	9,3	8	5,5	20,9	18	12	9
5520	Հոկտեմբերյանի շրջանի Շավառուտ գյուղ 13/8—48 թ.	Կիսանապատ	105	150	50,1	30,2	56	♂	28,8	25,6	14,5	11	10	7,5	5,2	—	15,8	12,1	8,7
5523	Հոկտեմբերյանի շրջանի Շավառուտ գյուղ	Կիսանապատ	110	170	46	27,5	56	♀	27,4	25,9	14,6	10,9	9,6	7,8	5,2	20,3	15,6	11,9	—

Գրականության տվյալների համաձայն այս կրծողը Անդրկովկասում տարածված է «Արարատի ստորոտների հարթավայրում, Սարդարաբադի տափաստանում, Նախիջևանում, Ջուլֆայի շրջակայքում, Օրդուբադում և այնուհետև անհետանում է բոլորովին։ Արևելյան Անդրկովկասում նա տարածված է Քուռի և Արաքսի հովտում, Ապշերոնյան թերակղզում, Թյուրքիայի հարավային մասերում» [1]։

Ըստ մեր կատարած հավաքի, Հայաստանում այս կրծողի տարածման մասին կարելի է ավելացնել, որ նա Հայաստանում շատ սահմանափակ տարածում ունի, և կենտրոնացած է Արարատյան հարթավայրի կիսանապատային մասսիվներում (Հոկտեմբերյանի շրջանի Շավառուտ գյուղի, Էջմիածնի շրջանի Զվարթնոցի, Այղր լճի, Արշալույս և Փարաքար գյուղերի շրջակայքում շատ մեծ տարածում ունի)։ Այդ վայրերում փոքր ճագարամուկը փոքրասիական ճագարամկան հետ նույն միկրոստացիաներում է կենտրոնացած։

Երևանի շրջակայքում նա կենտրոնացած է Կարմիր բլուրի, Ջրվեժի, Կոմսոմոլի այգու լճի շրջապատի կիսանապատային մասսիվներում, դարձյալ փոքրասիական ճագարամկան պարսկական և փոքրասիական ավազամկան հետ միասին նույն ստացիաներում։

Փոքր ճագարամուկը ծովի մակերևույթից 900—1000 մետրից ավելի երբեք չի բարձրանում։ Այսպիսով, փոքրասիական ճագարամկան տարածման համեմատությամբ տեսնում ենք, որ սրա տարածումը շատ սահմանափակ է։ Փաստորեն Արարատյան հարթավայրից դուրս նրան չենք հանդիպում։

Փոքր ճագարամկան բույնի կառուցվածքն ընդհանուր առմամբ շատ նման է փոքրասիական ճագարամկան բույնի կառուցվածքին, միայն չափերով ավելի փոքր է, մուտքի անցքը սովորաբար լինում է ձևաձև (5—6 սմ), անցուղին (15—20 սմ) խորանալով ծովում է ծնկաձև և այնուհետև լայնանալով գոյացնում անկողնատեղ կամ կամերա, որի տրամագիծը 18×15 սմ. բույնի ամբողջ երկարությունը հասնում է մինչև 100 սմ։ Դրանից ավելի երկար բույներ մեզ չեն հանդիպել։

Այս կրծողն էլ փոքրասիական ճագարամկան նման ցերեկը բույնի արտաքին անցքը խցանում է հողով և ինքը մնում է ներսը մինչև արևի մայր մտնելը և այնուհետև դուրս է գալիս կերակրվելու։ Բազմաթիվ անգամներ այդ ձևով խցանված բույներ մեզ պատահել են Էջմիածնից ոչ հեռու, Զվարթնոցի շրջապատում, ինչպես, օրինակ, 1942 թ. հուլիսի 1-ին ցերեկվա ժամը 12-ին նկատեցինք խցան-

ված մեկ բույն՝ փորձեցինք այն փորել և դեռ խցանը լրիվ չքանդած՝ կենդանին միջից դուրս թռավ ու խոշոր ցատկումներով սկսեց փախչել։

Արգիրոպուլը [1] հայտնում է այն միտքը, որ այս կենդանին Անդրկովկասում բնանցքի խցանում չի կատարում, իսկ Միջին Ասիայում այդ նույն տեսակը բնանցքը խցանում է։ Մեր կատարած դիտողությունները և հավաքած նյութերը ցույց են տալիս, որ Հայաստանում տարածված փոքր ճագարամուկը բնանցքը խցանում է այնպես, ինչպես Միջին Ասիայում տարածված փոքր ճագարամուկը։

Այսպիսով, Հայաստանում տարածված երկու տեսակ ճագարամկներն էլ բնանցքի հողի խցանում են կատարում, որը կարևոր էկոլոգիական հարմարվածություն է ներկայացնում։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Փոքրասիական ճագարամուկը Հայաստանում շատ լայն տարածում ունի. Արարատյան դաշտում ու ռեսպուբլիկայի գրեթե բոլոր շրջաններում տարածվում է ծովի մակերևույթից մինչև 2500 մետր բարձրության վրա։

2. Փոքր ճագարամուկը, ընդհակառակը, շատ սահմանափակ տարածում ունի. նա Արարատյան հարթավայրից 900—1000 մետրից ավելի չի բարձրանում։

3. Հայաստանում տարածված փոքրասիական ճագարամուկն իր չափերով ավելի խոշոր է, քան այլ վայրերում տարածված նույն տեսակը։

4. Նոր յուրացվող հողերում նրանց որոշ մասը մնում է և որպես վնասակար կրծող, վնաս է պատճառում այգիներին ու հացահատիկային ցանքերին։

5. Երևանի շրջակայքում եղած կրծողներից ինչպես ավազամկները, այնպես էլ ճագարամկները իրենց բույներում և իրենց վրա եղած արտաքին պարազիտներով հիվանդություններ են տարածում։

6. 2 տեսակ ճագարամկներն էլ բազմանում են տարեկան մեկ անգամ։

Կենդանաբանության ամբիոն

ЛИТЕРАТУРА

1. Аргиропуло А. И.—К распространению некоторых млекопитающих Армении. „Зоологический сборник“, вып. I, Ереван, 1939.
2. Бобринский Н. А., Кузнецов Б. А. и Кузякин А. П.—Определитель млекопитающих СССР, Москва, 1944.
3. Виноградов Б. С., Аргиропуло А. И. и Гептнер В. Г.—Грызуны Средней Азии. М., 1936.
4. Виноградов Б. С. и Громов И. М.—Грызуны фауны СССР, М.—Л., 1952.
5. Даль С. К.—Животный мир Армянской ССР, 1954.
6. Огнев С. И.—Звери СССР и прилежащих стран, 1948.
7. Шидловский М. В.—Определитель грызунов Грузии и сопредельных стран, Тбилиси, 1941.

А. Р. Погосян

МАТЕРИАЛЫ ПО ЭКОЛОГИИ ТУШКАНЧИКОВ, РАСПРОСТРАНЕННЫХ В АРМЯНСКОЙ ССР

Резюме

Изучение экологии тушканчиков Армянской ССР показало, что малоазиатский тушканчик имеет широкое распространение в Армении; начиная с Араратской долины, он поднимается до 2500 метров выше уровня моря почти во всех районах. Малый тушканчик, наоборот, имеет очень узкое распространение. С Араратской долины он не поднимается выше, чем на 900—1000 метров над уровнем моря. Распространенный в Армении малоазиатский тушканчик по своим размерам больше, чем распространенный в других районах Союза тот же вид.

На новоосвоенных землях некоторая часть тушканчиков остается как вредители-грызуны и причиняет вред садам, злакам и хлопководству.

Из грызунов окрестностей города Еревана песчанки и тушканчики могут иметь отрицательное значение с точки зрения здравоохранения, поскольку их наружные паразиты, которые живут в норах и на них самих, могут быть переносчиками различных серьезных заболеваний людей. Оба эти вида тушканчиков размножаются в году один раз.

Кафедра зоологии.

Ս. Ք. Մինասյան

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՐԹԱՎԱՅՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՀՈՏԱՎԵՏ ՓԱՅՏԱՏԱՇԻ (ՓԱՅՏԱՀԱՏԻ) (COSSUS COSSUS L.) ԲԻՈԼՈԳԻԱՅԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի Սեպտեմբերյան պլենումի որոշման և դրան հաջորդող մի շարք որոշումների մեջ տրված է մեր սոցիալիստական գյուղատնտեսության հետագա զարգացման, արագընթաց վերելքի մարտական ծրագիրը։

Մեր երկրում սոցիալիստական գյուղատնտեսության հետագա զարգացման համար կարևոր նշանակություն ունի նաև անտառային տնտեսության, դաշտապաշտպան անտառաշերտերի ստեղծման ու զարգացման գործը, որի ուղղությամբ Հայկական ՍՍՌ-ում զգալի աշխատանք է կատարվել վերջին տարիների ընթացքում, և ավելի մեծ մասշտաբի աշխատանքներ են կատարվելու առաջիկայում։

Անտառային տնտեսության պաշտպանության, դաշտապաշտպան անտառների ստեղծման ու զարգացման համար մեծ նշանակություն ունի անտառային վնասատուների ուսումնասիրության, նրանց դեմ պայքարելու պրակտիկ միջոցառումների մշակման հարցը։ Որքան լավ ուսումնասիրվեն այդ վնասատուները և մշակվեն նրանց դեմ ռացիոնալ պայքարի միջոցառումներ, այնքան մենք կունենանք առողջ և արագ զարգացող անտառներ, դաշտապաշտպան անտառաշերտեր, այգիներ, որոնց նշանակությունը մեծ է մեր սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման համար։

Նկատի ունենալով հոտավետ փայտատաշի հասցրած խոշոր վնասները անտառային, պուրակային տնտեսությանն ու այգեգործությանը և նրա դեմ պայքարի կազմակերպման կարևոր ժողովրդատնտեսական նշանակությունը, մենք ձեռնամուխ եղանք այդ վնասատուի ուսումնասիրությանը, որի ուղղությամբ Հայաստանում քիչ աշխատանք է կատարվել, առանձնապես ուշադրություն դարձնելով Հայաստանի պայմաններում նրա տարածման և բիոլոգիայի մի քանի հարցերի վրա։

Համառոտ տվյալներ հոտավետ փայտատաշի (փայտահատի) (Cossus cossus L.) մասին

Հոտավետ փայտատաշը ծառատեսակների լուրջ վնասատու թիթեռներից մեկն է։ Բնակվելով ծառի բնափայտի մեջ, նրա թրթուրը աստիճանաբար տաշում, քայքայում է այն, դրանով իսկ թուլացնում ծառի սննդառական, ջրաշրջանառական և այլ ֆիզիոլոգիական պրոցեսները՝ բնափայտի մեխանիկական դիմացկունությունը (քամիների նկատմամբ). Հետևաբար և նվազեցնում պտղատու ծառերի բերքը, նպաստավոր պայմաններ ստեղծում ծառերը ուրիշ հիվանդություններով վարակվելու տեսակետից։ Նա ավելի հեշտությամբ բնակություն է հաստատում այն ծառերի բնափայտերի մեջ, որոնք վարակված են այլ հիվանդություններով։ Այդ վնասատուն մի քանի տարում չորացնում, ոչնչացնում է ամբողջ ծառը։ Հոտավետ փայտատաշով վարակված ծառը անպետք է, որպես շինանյութ և ոչ-լիարժեք՝ որպես վառելանյութ։ Ըստ որում նա մի շարք վայրերում բավական մեծ տարածում ունի։

Հոտավետ փայտատաշը ամենից ավելի տարածված է ուռենու բնափայտի մեջ (այդ պատճառով էլ կոչվում է ուռենու փայտատաշ), բարդենու, թխկենու, լորենու, հացենու, հաճարենու, կեչու և այլ ծառերի բնափայտերի մեջ։ Իսկ պտղատու ծառերից նա տարածված է խնձորենու, տանձենու, ծիրանենու, բալենու և այլ ծառերի, ինչպես նաև խաղողի բնափայտերի մեջ։

Այդ տարբեր ծառատեսակները վերոհիշյալ վնասատուից վնասվում են ոչ-համաչափորեն։ Որոշ մասն ավելի մեծ վնասներ է կրում, իսկ մյուս մասը՝ համեմատաբար քիչ։

Հոտավետ փայտատաշի կողմից ծառատեսակներին հասցված վնասը արտահայտվում է երկու ձևով՝ մեխանիկական և ֆիզիոլոգիական։ Մեխանիկական վնասն այն է, որ փայտատաշի թրթուրները բույն դնելով ծառի բնի, նրա գլխավոր ճյուղավորությունների ու ճյուղերի մեջ, անհաման ձգտումով փորում, տաշում են ծառը, որի հետևանքով երիտասարդ ծառերն արագ ոչնչանում են, իսկ տարիքավոր ծառերը աստիճանաբար քայքայվում։ Ֆիզիոլոգիական վնասը արտահայտվում է վարակված ծառի արմատավզիկի շրջանում օղակավորման առկայությամբ։ Օղակավորումը կարող է լինել ամբողջական և մասնակի։ Եղել են դեպքեր, երբ օղակավորումը կատարվել է հողի մակերեսից 10—15 սանտիմետր ցած։ Օղակի լայնությունը հասնում է 8—10 սանտիմետրի, երբեմն՝ մինչև 20

սանտիմետրի։ Օղակավորման հետևանքով վնասվում է ծառի փոխադրող հյուսվածքը, խանգարվում ծառի մեջ նյութերի տեղաշարժը։ Բնական է, որ ամբողջական օղակավորման դեպքում ծառը ոչնչանում է, իսկ նրա վրա եղած թրթուրները, խուսափելով չորացած ծառից, իրենց հետագա զարգացումը շարունակելու համար փոխադրվում են կենդանի այլ ծառերի վրա և նույնպիսի վնասներ պատճառում վերջիններիս։

Այստեղից էլ պարզ են հոտավետ փայտատաշի պատճառած խոշոր վնասները անտառային, պտղատու պուրակային տնտեսության և այգեգործության, ինչպես նաև այդ վնասատուի դեմ պայքար կազմակերպելու կարևորությունը։ Մեր ամբողջ անտառային տնտեսության, դաշտապաշտպան անտառաշերտերի, պուրակների և այգիների հետագա արագ զարգացումը պահանջում է առանձնահատուկ ուշադրություն դարձնել հոտավետ փայտատաշի՝ այդ լուրջ վնասատուի, ուսումնասիրության և նրա դեմ էֆեկտիվ պայքար կազմակերպելու գործի վրա։

Հոտավետ փայտատաշն ունի լայն տարածում։ Նա տարածված է ամբողջ Եվրոպայում, Ասիայի որոշ մասերում։ Սովետական Միությունում նա տարածված է Լենինգրադի, Յարոսլավլի, Պոլտավայի, Գորկու, Տուլայի, Վորոնեժի, Սարատովի, Աստրախանի, Դոնի մարզերում, Միջին Ասիայում, Սիբիրում, Հեռավոր Արևելքում, Ղրիմում և Հյուսիսային Կովկասում։ Նա տարածված է նաև Անդրկովկասում՝ Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում։

Այդ վնասատուն Հայաստանում ամենից ավելի տարածված է Ալիգբեկովի, Մեղրիի, Կիրովականի, Էջմիածնի, Աշտարակի, Կոտայքի, Շահումյանի, Արտաշատի, Վեդու, Հոկտեմբերյանի և մի շարք այլ շրջաններում։ Նա լայն տարածում ունի Արարատյան հարթավայրում, որտեղ և կատարել ենք մեր ուսումնասիրությունները։

Հոտավետ փայտատաշի ուսումնասիրությունը սկսված է, 19-րդ դարի երկրորդ կեսից։ Դեռևս 1881—1882 թվականներին լույս է տեսել Կեպենի ուսումնասիրությունը այդ վնասատուի մասին։ 1886 թվականին հրապարակվել է Ն. Ա. Խոլոդկովսկու ուսումնասիրությունը [31], ուր ցույց է տրված, որ այդ վնասատուն տարածված է Մոսկվայի շրջակայքում, Պետերբուրգի անտառնե-

րում։ Նույն հարցի վերաբերյալ 1892—1898 թվականներին լույս են տեսել Շևիրևի աշխատությունները [32—35]։ 1900—1913 թվականներին Տրեյները կատարել է այդ վնասատուի ուսումնասիրությունը Ռուսաստանի մի շարք մարզերում և տպագրել առանձին աշխատություններ իր ուսումնասիրության արդյունքների մասին։ Այդ վնասատուի ուսումնասիրությամբ զբաղվել են նաև մի շարք ուրիշ գիտնականներ (Ներդլինգեր, Տեոբալդ, Տաշենբերգ, Լոյկարտ, Ռեզել և այլն)։

Չնայած կատարված որոշ աշխատանքներին, այնուամենայնիվ մինչսովետական շրջանում այդ վնասատուի ուսումնասիրության և նրա դեմ պայքարի միջոցառումներ մշակելու գործը անհրաժեշտ ուշադրության չի արժանացել։

Սովետական կարգերի հաստատումից հետո ինչպես գյուղատնտեսական մյուս վնասատուների, նույնպես և այս վնասատուի ուսումնասիրության ուղղությամբ մեր երկրի գիտնականները լուրջ աշխատանք են սկսել։ 1926 թվականին լույս են տեսել Պ. Զ. Վինոգրադովի, Նիկիտինի և Ֆ. Ա. Զայցևի աշխատությունները [5], որտեղ ցույց են տրված այդ վնասատուի տարածումը Կովկասում, հասցրած վնասները, ինչպես նաև պայքարի որոշ միջոցառումներ նրա դեմ։ Նույն թվականին լույս է տեսել Վ. Ի. Պլատնիկովի ուսումնասիրությունը [12], ուր ցույց է տրված այդ վնասատուի տարածումը Միջին Ասիայում, լուսաբանված են բիոլոգիական մի քանի հարցեր։ Հետագա տարիներին մեր երկրում նույն հարցի վերաբերյալ տպվում են ավելի շատ աշխատություններ։ 1931 թվականին լույս են տեսել Ն. Ստարկի [21], 1931 և 1953 թվականներին՝ Վ. Ստարկի [20, 22—28], 1931 և 1949 թվականներին՝ Ռիմսկի-Կորսակովի [17—18], 1949 թվականին՝ Դ. Վ. Պոմերանցևի [15] աշխատությունները և այլն։

Հաստվեստ փայտատաշի ուսումնասիրության հարցով սովետական գիտնականներից համեմատաբար ավելի հանգամանորեն է զբաղվել Ա. Վ. Շևստակովը։ 1933 թվականին նա հրատարակել է «Вредители древесины» աշխատությունը, որտեղ տրված է այդ վնասատուի բիոլոգիան, զարգացման ստադիաները, ինչպես նաև տարբեր ծառատեսակների վրա նրա տարածման չափը և հասցրած վնասները։

Սովետական Վրաստանում հաստվեստ փայտատաշի ուսումնասիրության հարցով զբաղվել է Դ. Ի. Լոզովոյը։ 1947 թվականին նա հրատարակել է իր ուսումնասիրության արդյունքները [10],

ուր նշել է, որ հոտավետ փայտատաշը մեծ տարածում ունի Վրաստանում և հանդիսանում է Թբիլիսիի պուրակային տնկիների լուրջ վնասատուներից մեկը։ Միայն վերջին տասնամյակի ընթացքում նա խոշոր վնասներ է հասցրել Խուդատովյան անտառներին և Բուսաբանական այգուն։ Ոչնչացվել են հարյուրավոր արժեքավոր ծառեր։

Մինչև սովետական կարգերի հաստատումը Հայաստանում հոտավետ փայտատաշի ուսումնասիրությամբ և նրա դեմ պայքարի միջոցառումներ մշակելու հարցով ոչ ոք չի զբաղվել։

Սովետական Հայաստանի գիտնականներից այդ հարցով զբաղվել են Հ. Ս. Ավետյանը և Գ. Ավագյանը։ 1952 թ. հրատարակված աշխատության մեջ Հ. Ս. Ավետյանը [2] նշել է, որ հոտավետ փայտատաշը տարածված է Հայաստանի մի շարք շրջաններում՝ Մեղրիում խնձորենու և սերկևիլենու վրա, Կիրովականում և Հոկտեմբերյանի շրջանի սովխոզներում՝ խնձորենու վրա, Էջմիածնի «Արարատ» տրեստի Վ. Մ. Մոլոտովի անվան սովխոզում՝ սերկևիլենու վրա գտնվել են թրթուրներ, իսկ Ազիզբեկովում՝ թիթեռներ։ 1953 թ. հրատարակված աշխատության մեջ [1] խոսելով հոտավետ փայտատաշի մասին, Գ. Ավագյանը նույնպես նշում է, որ այդ վնասատուն տարածված է Հայաստանում համարյա ամենուրեք և լուրջ վնաս է հասցնում առանձնապես ուռենուն, բարդենուն, կեչուն և հացենուն, իսկ պտղատու ծառերից՝ խնձորենուն, տանձենուն և սերկևիլենուն։ Նա տարածված է առավելապես Երևանի շրջակայքում, Կոտայքի, Շահումյանի, Աշտարակի, Էջմիածնի, Վեդու, Հոկտեմբերյանի և այլ շրջաններում։

Արարատյան հարթավայրի պայմաններում հոտավետ փայտատաշի (փայտահատի) (Cossus cossus L.) բիոլոգիայի մի քանի հարցերի մասին

Արարատյան հարթավայրում և Հայկական ՍՍՌ-ի մի շարք այլ շրջաններում ծանոթանալով հոտավետ փայտատաշի ուսումնասիրությանը, մենք նպատակ ենք դրել՝

1. Պարզել անտառային, պուրակային և պտղատու ծառատեսակների բնափայտի մեջ հոտավետ փայտատաշի տարածման չափը.

2. Պարզել այդ վնասատուի հասցրած վնասները.

3. Ուսումնասիրել, թե մեզանում հոտավետ փայտատաշն

ամենից ավելի ո՛ր ծառատեսակների բնափայտի մեջ է բնակություն հաստատում.

4. Հնարավորին չափ ուսումնասիրել մեր պայմաններում նրա բիոլոգիան և էկոլոգիան.

5. Վնասվածքի արտաքին հատկանիշներով ճանաչել մեր պայմաններում հոտավետ փայտատաշից վնասված ծառերը.

6. Գրականության տվյալների և մեր ուսումնասիրության հիման վրա տալ այդ վնասատուի դեմ պայքարի որոշ միջոցառումներ։

Ուսումնասիրության մեթոդը եղել է հետևյալը. բնական պայմաններում, օրվա տարբեր ժամերին զանազան ծառատեսակների վրա դիտողություններ ենք կատարել հետևյալ վայրերում՝ Քանաքեռի, Նորքի այգիներում (խնձորենի, տանձենի և սերկևիլենի), Հաղթանակի և Կոմսոմոլի անվան պուրակներում (ուռենիներ), 26 Կոմունարների անվան պուրակում (հացենի), Մանկական երկաթգծի շրջակայքում (ուռենիներ, ծիրանիներ), Շենգավիթի, Նորագավիթի այգիներում (ուռենի, բարդենի, սերկևիլենի) և Էջմիածնի շրջանի Արարատ տրեստի Վ. Մ. Մոլոտովի անվան սովխոզի սերկևիլանոցում, ինչպես նաև Շահումյանի, Հոկտեմբերյանի շրջանի այգիներում, Սևանի, Ալավերդի և Կիրովականի շրջանների անտառներում ու այգիներում։ Որպես մշտական ուսումնասիրության օբյեկտներ ընտրել ենք Երևանի Կոմսոմոլի անվան պուրակի և Մանկական երկաթգծի շրջակայքի ծառերը։

Վերոհիշյալ վայրերից էլ հավաքել ենք նյութեր լաբորատոր պայմաններում դիտողություններ կատարելու համար։ Հոտավետ փայտատաշի հավաքը կատարել ենք կացնի, սղոցի, դուրի և երկար աքցանի օգնությամբ։ Այնքանով, որքանով հոտավետ փայտատաշն իր զարգացման թրթուրային շրջանն անց է կացնում բնափայտի մեջ, մենք թրթուրներ հավաքելու համար տաշել ենք և տեղ-տեղ սղոցել բնափայտը, ճեղքել անցքերը, այնտեղից երկար աքցանի օգնությամբ դուրս բերել թրթուրներին և տեղավորել ապակյա կամ մետաղյա ամանների մեջ[1]։

Երևանի շրջակայքի բարձրադիր վայրերում, Նորքի և Քանաքեռի այգիներում, երիտասարդ ծառերի մեջ 1950 թ. մայիսի երկրորդ կեսին մեր կատարած դիտողությունների ժամանակ հանդիպել ենք ավելի երիտասարդ, 20—40 մմ երկարություն ունե-

[1] Մեր աշխատանքների ընթացքում մեծ օգնություն է ցուցաբերել ընկ. Ա. Սարգսյանը, որի համար շնորհակալություն ենք հայտնում։

ցող թրթուրների, մինչդեռ նույն ժամանակամիջոցում ցածրադիր վայրերում՝ Կոմսոմոլի, 26 Կոմունարների անվան պուրակներում և Մանկական երկաթգծի շրջակայքում, ավելի մեծահասակ ծառերի բնափայտի մեջ հանդիպել ենք 80—90 մմ երկարության հասուն թրթուրների, իսկ ճյուղերի, հատկապես գլխավոր ճյուղավորությունների, մեջ 30—50 մմ երկարություն ունեցող երիտասարդ թրթուրների։

1950—53 թթ. մեր կողմից դիտողություններ են կատարվել Երևանի Կոմսոմոլի պուրակի՝ փայտատաշով ուժեղ վարակված ուռենիների վրա։ 1950 թվականին այդ վարակված ծառերի մի մասը սղոցվեց հիմքից, որպեսզի նրանց թրթուրները չանցնեն առողջ ծառերի վրա և չվարակեն վերջիններիս։ Թրթուրների վրա դիտողություններ կատարելու նպատակով վարակված ծառերի մի մասը կտրեցինք գետնից 20—40 սմ բարձրության վրա։ Այսպիսով պահվեցին մի քանի վերերկրյա բներ ու մի քանի վարակված ծառեր, որոնց վրա կային օվալաձև անցքեր։ Կտրված ծառերից մեկի բնափայտից հանել ենք 80—90 մմ երկարություն ունեցող 65 թրթուր, մեկ ուրիշից հանել ենք 168 թրթուր, իսկ երրորդից՝ 171 թրթուր։ Առաջին ծառից հանված վերոհիշյալ 65 թրթուրներից 20-ը թողել ենք բնական պայմաններում ստուգելու՝ արդյո՞ք նրանք չոր բնափայտով սնվում են, թե՝ ոչ։ Պարզվեց, որ նրանք չոր բնափայտով չեն սնվում, այլ փնտրում են նոր, թարմ ու հյութալի կենդանի ծառեր՝ նրանց մեջ բնակություն հաստատելու համար։ Մնացած 45 թրթուրները տեղափոխել ենք լաբորատորիա՝ դիտողությունների համար։ Խնամքը ապահովելու նպատակով ամեն կերպ աշխատել ենք ստեղծել բնականին մոտ միջավայր և այդ 45 թրթուրներին կերակրել ենք ուռենու, բարդենու, խնձորենու թարմ ճյուղերով, որոնք ունեցել են 4—12 սմ տրամագիծ և 25—40 սմ երկարություն։ Այդ ճյուղերը թարմ պահելու նպատակով տեղավորել ենք մետաղյա մեծ արկղների և ապակյա մեծ ամանների մեջ (որոնք պահել ենք մթության պայմաններում) և ջրով թրջած բամբակով աշխատել ենք հնարավորին չափ պահպանել այդ ճյուղերի նորմալ խոնավությունը։ Նման պայմաններում թրթուրները սնվել են այնքան ժամանակ, քանի դեռ ճյուղերը թարմ են եղել։ Թարմությունը կորցնելուց հետո թրթուրները դադարել են սնվելուց, կիսով չափ կուչ են եկել բնափայտի, ինչպես և հողի մեջ, իսկ որոշ մասն էլ սատկել են։ Այդ պատճառով էլ հաճախ հին, չորացած ճյուղերը փոխարինել ենք նորերով։ Հետաքրքիր է նշել,

որ թրթուրները հնից նոր ճյուղերի մեջ անցնում էին մեկից երեք օրվա ընթացքում, այն էլ գիշերները։ Այս ձևով մեզ հաջողվել է թրթուրները պահել 2—2,5 ամիս, իսկ նրանցից 5-ը՝ 3 ամիս 4 օր։ Չնայած լաբորատորիայում հնարավորին չափ ստեղծել էինք բնականին մոտ պայմաններ (որի շնորհիվ թրթուրները լավ սնվել էին), բայց, այնուամենայնիվ, նրանք մեկը մյուսի հետևից ոչնչացան (առհասարակ հոտավետ փայտատաշի թրթուրները դիմացկուն չեն և շատ շուտ ոչնչանում են)։ Սատկելու նախօրյակին թրթուրների մաշկը բարակում էր, սևանում, մարմինը թուլանում և դառնում խմորանման։

Լաբորատոր պայմաններում կատարված դիտողություններին զուգընթաց, դիտողություններ են կատարված նաև բնական պայմաններում՝ Կոմսոմոլի անվան պուրակում։ Այստեղ փորձի համար ընտրել էինք խիստ վարակված երկու ուռենի՝ լճի մեջ, ափից 2 մ հեռավորության վրա։ Այդ ուռենիներից փչում էր սուր թթվային հոտ։ Գլխավոր ճյուղավորություններից մինչև հիմքերը նրանք պատված էին օվալաձև անցքերով, որոնց եզրերին տեղ-տեղ կուտակված էին կարմրավուն թեփախառն զանգվածներ։ Այդ ծառերի բնափայտը տաշված, սղոցված էր հոտավետ փայտատաշի կողմից, բայց դեռ լրիվ չէր ոչնչացել, կային կանաչ ճյուղեր և տերևներ։ Փորձի համար այդ ծառերից մեկի գլխավոր ճյուղավորության շրջանում եղած անցքերը էտիկավորեցինք, իսկ բնափայտի վրայի անցքերը ծածկեցինք կավային շերտով և մաղլայի հատուկ պարկերով, որպեսզի հնարավոր լինի թիթեռները բոժոժից դուրս գալուց հետո վերցնել։ Այդ ծառից ստացանք 4 թիթեռներ, որոնք երկար չապրեցին։ Մյուս ծառից հանեցինք 93 հարսնյակ։ Հետագայում պարզեցինք, որ այդ 93 հարսնյակներից 71-ը (ըստ Հ. Տերտերյանի որոշման) վարակված են եղել ճանճերի Larvivoridae ընտանիքին պատկանող թրթուրներով, իսկ 22-ը՝ տզերով։ 22 հարսնյակներից 13-ը ոչնչացել էին, իսկ 9-ի բոժոժները կտրեցինք, զգուշությամբ հանեցինք այնտեղից թուլացած հարսնյակներին և նուրբ խոզանակով մաքրեցինք տզերից։ 71-ից 5-ը մաքրեցինք ճանճերի թրթուրներից։ Հետո նորից տեղափոխեցինք և կարեցինք բոժոժի մեջ, նպատակ ունենալով պարզել, թե նրանք այդ պարազիտներից են ոչնչացել, թե՞ ուրիշ պատճառներից։ Պարզվեց, որ հարսնյակները ոչնչացել են պարազիտներից։ Այս ձևով պահված 9 հարսնյակներից ստացանք 7 թիթեռ, որից 4-ը՝ էգ, 3-ը՝ արու, իսկ ճանճերով վարակվածները սատկեցին։ Լաբորատորիայում ստանց զուգավոր-

վելու, էգերից մեկը դրել էր չբեղմնավորված ձվեր։ Թիթեռների զուգավորության ակտը ապահովելու և արագացնելու, ինչպես նաև բեղմնավորված ձվեր ստանալու նպատակով, մենք փորձեցինք արուներին ու էգերին մոտեցնել իրար։ Այսպես միջամտելով նրանց զուգավորման պրոցեսին, որը և մեզ հաջողվեց, ստացանք բեղմնավորված ձվեր։ Հաշվումներից պարզվեց, որ յուրաքանչյուր էգը դնում է 700—900 ձու։ Ստացված ձվերը պահելու և նրանց հետագա զարգացումը ապահովելու համար, մենք աշխատեցինք լաբորատորիայում ստեղծել բնականին մոտ պայմաններ, որի համար ստացված ձվերը տեղափոխեցինք ուռենու բնափայտի կեղևի ճեղքերի մեջ, որտեղ և մեզ հաջողվեց այդ ձվերից ստանալ թրթուրներ։ Լաբորատորիայում այդ պահված ձվերի մի մասից թրթուրներ ստացանք 7—9 օրվա ընթացքում, իսկ մյուս, ավելի շատ մասից՝ 10—12 օրվա ընթացքում։ Այսպիսով՝ ստացվեցին առաջին հասակի թրթուրներ, որոնք իրար ուտում էին, նրանցից մի մասը այդ ճանապարհով ոչնչացավ, մնացած մասը տեղափոխեցինք երիտասարդ ուռենիների ճյուղերի մեջ, որոնք որոշ ժամանակ սնվելով, նորից մաս առ մաս ոչնչացան։

Հայտնի է, որ հոտավետ փայտատաշը պատկանում է թիթեռների կարգի Cossidae ընտանիքին։ Հոտավետ փայտատաշը գիշերային մեծ թիթեռ է։ Ցերեկը նա անշարժ նստում է ծառի բնի կեղևի ճեղքերի մութ տեղերում և իր գույնի շնորհիվ աննկատելի է։ Թիթեռները հատկապես լավ են թռչում գիշերը։

Էգերն ունեն երկար ձվադիր, որի օգնությամբ ձվերը դնում են կեղևի ճեղքերում։ Ձվերը դրվում են կույտերով 20—40 հատ, որոնք էգի կողմից արտադրված գորշ հեղուկի շնորհիվ կպչում են ոչ միայն կեղևին, այլև միմյանց, որը, ըստ Շրեյների, բաց օդում արագորեն պնդանում է։

Այդ հաստատվեց նաև մեր դիտողությունների ժամանակ։

Ինչպես նշեցինք, լաբորատոր պայմաններում մեր կատարած դիտողությունների ժամանակ թիթեռների դրած ձվերի քանակը հասնում է 700—900-ի։

Ըստ գրականության տվյալների, ձուն ունի 1,5 մմ երկարություն։ Մեր չափումներով այն հասնում է մինչև 2 մմ-ի։ Մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հոտավետ փայտատաշի ձվերը զարգանում են 7—12 օրում։ Ամռան երկրորդ կեսին ձվերից նոր դուրս եկած փոքրիկ վարդագույն թրթուրները սկզբում ապրում են խմբերով, կեղևի տակ և աստիճանաբար միասին բաց անում

ուղիներ բնափայտի մեջ, կամ մտնում են եղած ուղիների մեջ որտեղ և ձմեռում են։ Մեկ ուղիում հանդիպել ենք 27—40 թրթուրի։ Գրականության մեջ նշված է, որ փայտատաշի թրթուրները (հատկապես հասունները) շատ անհանգիստ են, ոչնչացնում են միմյանց, այլ կերպ ասած, վարում են գիշատիչ կյանք։ Այս բանը հաստատվեց նաև մեր հետազոտության ընթացքում։ Լաբորատորիայում հաշվառման ժամանակ պարզվեց, որ մետաղյա ամանում պահված 36 հասուն թրթուրներից մնացել էին 25-ը, իսկ 11-ը զոհ էին դարձել (նրանց կերել էին մյուսները)։ Նկատվել է նաև, որ առաջին հասակի թրթուրները ևս լաբորատոր պայմաններում առանց սննդի մնալով իրար կերել էին։ Այսպես, մեկ ուրիշ փորձի ժամանակ 43 թրթուրներից 26-ը մնացել էին կենդանի, իսկ 17-ը՝ կեր էին դարձել մյուսներին։ Մնացած 26 թրթուրներին որպես կեր տվեցինք ուռենու, բարդենու, սալորենու, բալենու, խնձորենու և սերկևիլենու ճյուղեր, սակայն նրանք գերադասեցին սնվել ուռենու և սերկևիլենու ճյուղերով։ Որոշ ժամանակից հետո, այդ թրթուրները ևս ոչնչացան։ Նկատի ունենալով, որ լաբորատոր պայմաններում մեզ չի հաջողվել թրթուրներ պահել և հասունացնել մինչև հարսնյակավորվելը մենք նրանց ֆիքսեցինք 3-տոկոսանոց ֆորմալինի լուծույթի մեջ։

Մեր կողմից՝ հոտավետ փայտատաշի բիոլոգիայի մի քանի հարցերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ձվից դուրս եկած առաջին հասակի թրթուրները, կույտերով ապրելով ծառի կեղևի տակ, աստիճանաբար թափանցում են բնափայտի մեջ՝ ձմեռելու համար։ Գարնանը, մարտի երկրորդ կեսին—ապրիլի սկզբին, նրանք արթնանում, սկսում են տաշել, կրծել բնափայտը, բացելով նոր ուղիներ (որոնք աստիճանաբար ճյուղավորվում են), մինչև 5—10 սմ խորանալով բնափայտի մեջ ձմեռում են երկրորդ անգամ։

Կտրվածքում ուղիները օվալաձև են, անցնում են անկանոն և հաճախ հյուսվում են միմյանց հետ։ Ուղիները արտաքին աշխարհի հետ հաղորդակցվում են օվալաձև անցքերի միջոցով, որոնցից թրթուրները դուրս են շպրտում իրենց արտաթորանքը, որի միջոցով հեշտ է ճանաչել վարակված ծառերը։ Թրթուրները սուբստրատի հետ շփվելիս, արձակում են հյութ, որը կարմրավուն թեփախառն շաղախ է և ունի սուր քացախաթթվային հոտ։ Այդ հոտը զգացվում է բավական մեծ հեռավորությունից, այստեղից էլ առաջացել է թիթեռի անունը՝ հոտավետ փայտատաշ։

Երրորդ տարվա գարնանը, ամռանը, երբեմն նույնիսկ աշնան

տաք օրերին թրթուրները վերջացնելով իրենց զարգացումը, հաճախ թողնում են իրենց ուղիները և դուրս են գալիս ծառից հարսնյակավորվելու համար։ Այդ նպատակով նրանք տարածվում են շրջակայքում և փնտրում հարմար տեղ։ Այդ ճանապարհորդության ժամանակ հաճախ նրանց վրա անցնում են զանազան պարազիտներ։ Մեզ հաջողվել է գտնել բազմաթիվ հարսնյակներ ծառի բնափայտի մեջ, ծառի մոտ, փտած բնափայտերի կույտերի մեջ, կտրտված ճյուղերի մեջ և այլն։ Թրթուրների՝ ծառի բնափայտից դուրս գալու և նրա շրջակայքում տարածվելու երևույթներին մենք ականատես ենք եղել էջմիածնի շրջանում, Երևանի Կոմսոմոլի անվան պուրակում և մի շարք այլ վայրերում։ Դա լինում է ուշ գարնանը և ամռանը։ Բոժոժն ունի 50—65 մմ երկարություն և 22—25 մմ լայնություն։ Բոժոժի ներսի պատը հարթ է, պատված մոխրագույն մետաքսանման հյուսվածքով, իսկ արտաքինից անհարթ է, պատված տաշված բնափայտի թեփով։ Հարսնյակավորումը սկսվում է մայիսի վերջին—հունիսի սկզբին և տևում է 3—4 շաբաթ։ Հարսնյակի երկարությունը լինում է 40—60 մմ։

Այսպիսով, մեր մի քանի բիոլոգիական դիտողությունները, հոտավետ փայտատաշի (փայտահատի) զարգացման վերաբերյալ, ցույց են տալիս, որ այդ վնասատու թրթուրը Հայաստանի պայմաններում նույնպես երկու տարի ապրում և ձմեռում է բնափայտի մեջ, երրորդ տարվա գարնանը և ամռան առաջին կեսին թրթուրները հասունանում են և հարսնյակավորվում ամուր մետաքսյա բոժոժներում։ Ամռանը, հունիսի երկրորդ կեսին և հուլիսի առաջին կեսին դուրս է գալիս թիթեռը։ Երկու տարվա ընթացքում տալիս է մեկ սերունդ։

Պայքարի միջոցառումները հոտավետ փայտատաշի (Cossus cossus L.) դեմ

Հոտավետ փայտատաշի դեմ կիրառվող պայքարի միջոցառումները 4 տիպի են՝ 1. նախազգուշական, 2. ֆիզիկո-մեխանիկական, 3. քիմիական, 4. բիոլոգիական։

Պայքարի նախազգուշական միջոցառումների նպատակն է՝ հոտավետ փայտատաշի նորմալ զարգացման համար ստեղծելով անբարենպաստ պայմաններ, կանխել նրա զարգացումը։ Որպես պայքարի նախազգուշական միջոցառում, անհրաժեշտ է գոմաղբից, կավից և կրից պատրաստված խառնուրդով ծածկել ծառի բնի կեղևի

ճեղքերը ու թիթեռներին զրկել ծառի կեղևի ճեղքերում ձվադրելու հնարավորությունից: Նախազգուշական միջոցառում է նաև, երբ աճեցման համար ընտրում ենք առողջ, վարակման դժվար ենթակա բնափայտ ունեցող տնկիներ:

Պայքարի ֆիզիկո-մեխանիկական հաջող և ընդունված միջոցառումներից է համարվում թրթուրների հավաքը և ոչնչացումը, որը պետք է սկսել վաղ գարնանը և շարունակել մինչև ուշ աշուն: Երբ փայտատաշի ուղիները խորը չեն, ծառերի բնափայտը թրթուրներից կարելի է մաքրել, հատուկ կարթերի միջոցով նրանց դուրս բերելով և ոչնչացնելով: Դրանից հետո ուղիների անցքերը անհրաժեշտ է փակել գոմաղբի, կավի և կրի հիշյալ խառնուրդով: Թրթուրներին իրենց ուղիներում ոչնչացնելու համար կարելի է օգտագործել սուր ծայրով մետաղյա երկար լարեր, որոնք մացվում են ուղիների մեջ և շարժում հետ ու առաջ, դրանով ծակելով կամ վիրավորելով թրթուրներին: Քանի որ թրթուրները շատ նուրբ են, ուստի ամենափոքր վնասվածքն անգամ նրանց համար մահացու է: Այս միջոցով Շրեյներին հաջողվել է երկու տարվա ընթացքում մաքրել մի այգի: Սակայն սա ծառերի թրթուրներից մաքրելու այնքան էլ հաջող միջոց չի կարելի համարել, որովհետև նրանց փորվածքները լինում են ոչ միայն ուղիղ, այլև ճյուղավորված, զիգզագ և անգամ իրար հետ հյուսված: Հունիսին և հուլիսին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել թիթեռների վրա, որոնք դեռ նըստած են լինում ծառերի բներին, դրանց պետք է հավաքել և ոչընչացնել: Այն հիվանդ ծառերը, որոնց վրա փայտատաշն ամրացել է և ոչ մի կերպ հնարավոր չէ մաքրել, նպատակահարմար է կտրել և օգտագործել միայն որպես վառելափայտ:

Հոտավետ փայտատաշի դեմ պայքարի ամենաէֆեկտիվ միջոցառումը քիմիական պայքարն է, որի շնորհիվ թրթուրները մասսայաբար ոչնչանում են: Քիմիական պայքարի միջոցն է ծծմբաջրածինը և դիքլորէթանը, որոնց միջոցով թունավորվում և ոչնչացվում են թրթուրները: Թրթուրները արագ ոչնչանում են, և ծառը ապահովվում է վնասից, երբ մառլայի կամ բամբակի գնդիկը թրջում ենք ծծմբաջրածնով կամ դիքլորէթանով և մտցնում ծառի բնափայտի ուղիների մեջ և կավով ծածկում: Թիթեռի դեմ որպես քիմիական պայքարի միջոցառում, նրա թռիչքի ժամանակ անհրաժեշտ է ծառը փոշոտել ԴԴՏ-ի կամ հեքսաքլորանի դուստով:

Պայքարի այս միջոցառումները հնարավոր են պարկային տընտեսության և այգեգործության մեջ, իսկ վարակված անտառների

համար այն արմատական միջոցառում համարել չի կարելի որպիսին մինչև այժմ գիտության կողմից դեռ չի մշակված։

Բացի պայքարի այդ միջոցներից, բնության մեջ անկախ մարդկանցից տեղի է ունենում այսպես կոչված բիոլոգիական պայքար, որի ժամանակ միջատներն իրենց զարգացման տարբեր ստադիաներում (ձու, թրթուր, հարսնյակ) պարազիտում են այլ միջատների ձվի, թրթուրի, հարսնյակների մեջ և վերջ ի վերջո ոչնչացնում նրանց։ Հոտավետ փայտատաշի թրթուրների վրա պարազիտում են ու նրանց ոչնչացնում հետևյալ երեք հեծյալները. 1) Meniscus setosus, 2) Mesostanus glaodiator, 3) Lehneumon pusilla (Ճրեյներ) և ճանճերից՝ xylotachina diluta Meig (Պոմերանցև)։ Այս պարազիտների ազդեցությունը փայտատաշի թրթուրների վրա ոչ այլ ինչ է, եթե ոչ բիոլոգիական պայքարի ձև։ Բացի այս չորս տեսակներից, մեր ուսումնասիրության ընթացքում հաջողվել է հաստատել, որ հոտավետ փայտատաշի հարսնյակի թրթուրների վրա պարազիտում և նրանց ոչնչացնում են նաև Larvivoridae ընտանիքին պատկանող ճանճերի թրթուրները և անորոշ տեսակի տզեր։

Բիոլոգիական պայքարը հոտավետ փայտատաշի դեմ ուժեղացնելու համար անհրաժեշտ է բազմացնել հոտավետ փայտատաշի վրա պարազիտող ու նրան ոչնչացնող վերոհիշյալ պարազիտները, որոնք ոչնչով չեն խանգարում ծառատեսակներին։

Պայքարի այդ բոլոր միջոցները կիրառելի են նաև մեզանում, ինչպես ապացուցվել է մեր ուսումնասիրության ընթացքում։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Արարատյան դաշտավայրում և Հայկական ՍՍՌ-ի մի քանի այլ շրջաններում Cossus cossus L. հոտավետ փայտատաշի (փայտահատի) տարածման ու բիոլոգիայի մի քանի հարցերի և հասցրած վնասների վերաբերյալ մեր ուսումնասիրությունների արդյունքները՝ գալիս ենք հետևյալ եզրակացությունների։

1. Անտառային տնտեսության, պտղատու այգիների ու պուրակների ծառատեսակների վնասատու հոտավետ փայտատաշը լայն տարածում ունի Երևանի շրջակայքում (Հաղթանակի, Կոմսոմոլի անվան, 26 Կոմունարների անվան պուրակներում, Քանաքեռի, Նորքի այգիներում, Մանկական երկաթգծի շրջակայքում, Շենգավիթի, Նորագավիթի այգիներում) և Հայկական ՍՍՌ-ի էջ-

միածնի, Աշտարակի, Շահումյանի, Հոկտեմբերյանի, Կիրովականի և Ստեփանավանի շրջաններում։ Էջմիածնի, Աշտարակի, Հոկտեմբերյանի շրջաններում մեզանից առաջ այդ վնասատուների տարածումը ուսումնասիրել են Հ. Ս. Ավետյանը և Գ. Ավագյանը։ Որպես հոտավետ փայտատաշով վարակված շրջաններ, նրանք նշել են նաև Ազիզբեկովի, Մեղրու և Վեդու շրջանները։

Կատարված հետազոտությունները հիմք են տալիս ենթադրելու, որ այդ վնասատուն տարածված է նաև Ռեսպուբլիկայի մյուս՝ դեռևս չուսումնասիրված շրջաններում։ Այսպիսով, ամբողջ Հայկական ՍՍՌ-ում այդ վնասատուն ունի լայն տարածում։

2. 1950—1953 թվականներին վերոհիշյալ վայրերում մեր կատարած ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հոտավետ փայտատաշը լուրջ վնասներ է հասցնում անտառային տնտեսությանը, պտղատու այգիներին և պուրակներին նաև մեր պայմաններում։ Այդ վնասները արտահայտվում են հետևյալում՝ մի քանի տարվա ընթացքում հոտավետ փայտատաշը քայքայում և չորացնում է ծառատեսակները, թուլացնում նրանց մեխանիկական դիմադրողականությունը, ծառատեսակները որպես շինանյութ և վառելանյութ արժեքազրկվում են, զգալի չափով ընկնում է պտղատու այգիների բերքատվությունը։ Այդ վնասատուի վարակած ծառերը թուլանում են և հեշտությամբ վարակվում այլ հիվանդություններով։

3. Մեր ուսումնասիրած վայրերում հոտավետ փայտատաշն ամենից ավելի տարածված է ուռենու և սերկևիլենու բնափայտի մեջ, հետևապես, մեր պայմաններում այդ վնասատուից ամենից շատ տուժում են վերոհիշյալ ծառատեսակները։ Այդ վնասատուից զգալի չափով վարակվում են նաև կաղնին, կեչին, լորենին, հացենին, թղկենին և այլն, իսկ պտղատու ծառերից՝ խնձորենին, տանձենին, բալենին, ծիրանենին և այլն։

4. Հոտավետ փայտատաշով վնասված ծառերը կարելի է ճանաչել արտաքին հետևյալ նշաններից՝ վարակված ծառերը, սկսած գլխավոր ճյուղերից մինչև բունը, պատած են օվալաձև անցքերով, որոնց եզրերին տեղ-տեղ կուտակված են կարմրավուն թեփախառն զանգվածներ։ Վարակված ծառից փչում է սուր քացախաթթվային հոտ։

5. Երիտասարդ ծառատեսակների վրա նկատվում են մեծ մասամբ առաջին տարվա թրթուրներ, իսկ երկրորդ տարվա թրթուրներ՝ շատ քիչ։ Ընդհականակը՝ ավելի հասակավոր ծառատեսակների

վրա նկատվում են երկրորդ տարվա հասուն թրթուրներ, հատկապես բնում և գլխավոր ճյուղավորություններում։ Դրանից հետևում է, որ երիտասարդ ծառատեսակների պաշտպանությունն այդ վնասատուից համեմատաբար ավելի հեշտ է։

6. Հոտավետ փայտատաշի յուրաքանչյուր էգ թիթեռ դնում է 700—900 ձու։ Մեր ուսումնասիրած վայրերում ձվի զարգացումը տևում է 7—12 օր։ Ձվից դուրս եկած առաջին տարվա թրթուրները, որոնք սկզբում լինում են կեղևի տակ, խմբերով աստիճանաբար փորում են բնափայտը և խորանում նրա մեջ ու ձմեռում։ Ձմեռումը սկսվում է հոկտեմբերին, իսկ մարտին սկսում են գործել։ Երկրորդ ձմեռումը նորից սկսվում է հոկտեմբերին։ Երրորդ տարվա գարնանը և ամռան առաջին կեսին հասուն թրթուրները դուրս են գալիս և սկսում բոժոժ հյուսել։ Հարսնյակավորումը սկսվում է մայիսի վերջից-հունիսի առաջին կեսից և տևում է երեքից-չորս շաբաթ, որից հետո տալիս է թիթեռ, որը թռչում է հունիսին և հուլիսին։

7. Մեր ուսումնասիրած վայրերում հոտավետ փայտատաշը երկու տարի ապրում է ծառի բնափայտի մեջ։ Երրորդ տարվա գարնանը և ամռան առաջին կեսին թրթուրները հասունանում են և հարսնյակավորվում։ Երկու տարվա ընթացքում տալիս են մեկ սերունդ։

8. Հոտավետ փայտատաշի թրթուրների համար որպես պարազիտներ հայտնի են հետևյալ երեք հեծյալները՝ Meniseus setosus, Mesostanus glaodiator, Lehneumon pusilla և ճանճերից՝ xylotachina diuta Meig, իսկ մեր կատարած դիտողությունները ցույց տվեցին, որ հոտավետ փայտատաշի թրթուրի և հարսնյակի վրա կարող է պարազիտել նաև ճանճերից Larvivoridae ընտանիքին պատկանող թրթուրներ, ինչպես նաև անորոշ տեսակի ոզեր։

9. Հոտավետ փայտատաշի դեմ մղվող պայքարի միջոցառումները չորս տիպի են՝ նախազգուշական, ֆիզիկո-մեխանիկական, քիմիական և բիոլոգիական։ Ամենից արդյունավետ միջոցը քիմիական միջոցն է։ Այդ բոլորը ապացուցվել են մեր փորձերի ընթացքում, և պայքարի այդ միջոցառումները կարելի է կիրառել նաև Հայաստանի պայմաններում։

Կենդանաբանության ամբիոն

ЛИТЕРАТУРА

1. (Авакян Г.)—*Ավագյան Գ.—Դաշտապաշտպան անտառաշերտերի վնասատու միջատները Հայաստանում և պայքարը նրանց դեմ, Երևան, 1953։*
2. Аветян А. С.—Вредители плодовых культур в Армянской ССР, Ереван, 1952.
3. Богданов-Катьков Н. Н.—Практическая энтомология. Вып. I. Общие черты строения насекомых и определительные таблицы их отрядов и семейств. 1925.
4. Болдырев В. Ф. и др.—Основы защиты от вредителей сельскохозяйственных растений. Сельхозгиз. 1936.
5. Виноградов П. З., Никитин и Зайцев Ф. А.—Материалы к изучению короедов Кавказа, Тифлис, 1926.
6. Гусев В. И.—Мероприятия по борьбе с вредителями и болезнями древесных и кустарниковых пород в каменисто степных полезащитных полосах Воронежской области. Труды ВАСХНИИЛ, М., 1937.
7. Гусев В. И., проф. Римский-Корсаков М. Н.—Определитель повреждений лесных и декоративных деревьев и кустарников европейской части СССР, Ленинград, 1940.
8. Ильинский А. И.—Определитель яйцекладок, личинок и куколок насекомых. Гостехиздат, 1948.
9. Кеппен Ф.—Вредные насекомые, СПБ, 1881—83 (Сочинение устаревшее, но содержащее много добросовестно собранных данных о вредителях леса в XIX столетии).
10. Лозовой Д. И.—Пахучий древоточец (Cossus cossus L.) в парковых насаждениях Тбилиси. Сообщения АН Груз. ССР, т. VIII, № 5, 1947.
11. Лозовой Д. И.—Вредные насекомые парковых насаждений „Вестник" Тбилисского Ботанич. сада в г. Тбилиси. 57, 1948.
12. Плотников В. И.—Насекомые, вредящие хозяйственным растениям в Средней Азии. Ташкент, 1926.
13. Плотников В. И.—Насекомые, вредящие садоводству, полеводству и огородничеству в Туркестане с указанием способов борьбы. Ташкент, 1914.
14. Померанцев Д. В.—Вредные насекомые и меры борьбы с ними в лесах и лесных полосах юго-востока европейской части СССР. Госиздат, 1939.
15. Померанцев Д. В.—Вредные насекомые и меры борьбы с ними в лесах и лесных полосах юго-востока европейской части СССР. Госиздат, 1949.
16. Римский-Корсаков М. Н.—Вредные и полезные насекомые. Итоги науки. Москва, 1914.

17. Римский-Корсаков М. Н.—Исследование лесов, зараженных хрущами. Методы обследования лесов, зараженных вредителями. Ленинград, 1931.

18. Римский-Корсаков М. Н. и др.—Лесная энтомология. Гослесбумиздат. 1949.

19. „Сад и огород"— Ежемесячный научно-производственный журнал № 11. Ноябрь. Москва, 1952.

20. Старк В. Н.—Вредные лесные насекомые, 1931.

21. Старк Н.—Враги леса, 1931.

22. Старк В. Н.—Руководство к учету повреждений леса с определителем. Сельхозгиз, 1931.

23. Старк В. Н., Старк Н. К., Белановский И. Д.—Методы и техника борьбы с вредными лесными насекомыми, ч. I. Лесохозяйственные и биологические меры борьбы, 1932.

24. Старк В. Н.—Инструкция по собиранию и изучению короедов (Ipidae). Изд. АН СССР. М.-Л., 1936.

25. Старк В. Н.—Система мероприятий по охране от вредителей и болезней полезащитных лесных полос Воронежской области. Труды ВАСХНИИЛ, М., 1937.

26. Старк В. Н.—Проблема облесения степей и задачи энтомологии. „Известия" Всесоюзного Географического Общества, т. 81, вып. 3, Л, 1949.

27. Старк В. Н. и др.—Вредители и болезни полезащитных лесных насаждений, 1951.

28. Старк В. Н.—Краткий обзор вредителей древесных пород лесной зоны. „Животный мир СССР", IV, Изд. АН СССР, 1953.

29. Труды по защите растений. I серия энтомологии. Выпуск 5. Всесоюзн. Академия с.-х. наук им. В. И. Ленина. Ин-т защиты растений. Ленинград, 1932.

30. Филипьев И. Н.—Определитель насекомых, 1928.

31. Холодковский Н. А.—О ходах короедов. „Ежегодник Лесного Ин-та". 3. 1886.

32. Шевырев И. Я.—Изображение вреднейших лесных насекомых России, изд. Лесн. департамента, 1893.

33. Шевырев И. Я.—Вредные лесные насекомые Южной России. Из отчета Лесного департамента, сельхоз. и лесов. 1892.

34. Шевырев И. Я.—Описание вредных насекомых степных лесничеств и способов борьбы с ними. 1893, 1898, Петербург.

35. Шевырев И. Я.—Отчет о поездке в июне—октябре 1913 г. в казенные леса губернии Киевской, Таврической, Тамбовской, Черниговской и др. для указания борьбы с вредными лесными насекомыми, 1914.

36. Шестаков А. В.—Основы энтомологии. Общая часть. Сельхозгиз, 1932.

37. Шестаков А. В.— Вредители древесины. Подробное описание и методы борьбы. 1933.
38. Шиперович В. Я.—Распространение пилильщиков, вредящих сосне, и факторы, понижающие их размножение. Изв. Ленинград. лесн. ин-та, 34, 1927.
39. Шрейнер Я. Ф.—Древесница въедливая и древоточец пахучий, вред их в садоводстве и меры борьбы с ними. Труды бюро по энтомологии, т. IV, 3, 1905.
40. Шрейнер Я. Ф.—Древесница въедливая (Zeuzera pyrina L.) и древоточец пахучий (Cossus cossus L.). Труды бюро энтомологии, VI, 1913.
41. Щелкановцев Я. П.—Очерки по биологии лесных вредных насекомых и меры борьбы с ними. 2-е издание, 1932.
42. Яцентковский А. В.—Главные враги леса и меры борьбы с ними, 1926.
43. Яцентковский А. В.—Лесоэнтомологические работы в лесах Ленинградской обл. Труды совещания по лесному отделу при лесном отделе Ленингр. обл. зем. упр. 5/V-1928.
44. Яцентковский А. В.—Главнейшие вредные насекомые в лесах СССР. Сельхозгиз, 1931.

А. К. Минасян

О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ БИОЛОГИИ ДРЕВОТОЧЦА ПАХУЧЕГО (COSSUS COSSUS L.) В УСЛОВИЯХ АРАРАТСКОЙ НИЗМЕННОСТИ

Резюме

В результате трехлетних исследований автору удалось выявить, что древоточец пахучий (Cossus cossus) довольно широко распространен в Армении, и в частности в Араратской долине.

Он причиняет большой вред плодовым деревьям и парковым насаждениям города Еревана, Котайкского, Эчмиадзинского, Шаумянского, Аштаракского, Октемберянского и других районов. Не исключена возможность нахождения данного вредителя и в северных районах республики.

Указанным вредителем в обследованных районах больше всего поражаются виды айвы и ивы, но нередки случаи поражения также яблони, груши, клена, березы, ясеня, дуба и др.

Вред, причиняемый древоточцем пахучим, весьма велик. Гусеница древоточца пахучего, втачиваясь в древесину нижней части ствола дерева, разрушает и обесценивает ее не только как строительный материал, но и как топливо. В местах прохождения гусеницы трескается кора дерева и обнажается древесина. Из этих трещин вытекает сок, привлекающий других вредителей из мира насекомых, и пораженное дерево становится как бы очагом для развития других вредителей.

Данные, полученные автором, показали, что самка древоточца пахучего в условиях Армении в течение сезона откладывает от 700 до 900 яиц. Яйца сравнительно крупные, величиною в 2 мм.

Цикл развития древоточца пахучего довольно продолжителен. Гусеницы его зимуют два раза и только на третье лето заканчивают свое развитие.

На основании своих исследований по биологии древоточца пахучего и имеющихся литературных данных автор предлагает меры борьбы с этим опасным вредителем в условиях Араратской долины.

Кафедра зоологии.

Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետ. համալսարանի գիտ. աշխատություններ
Научные труды Ереванского государственного университета им. В. М. Молотова
49 1955

С. Г. Аветян

К ВОПРОСУ О ВЛИЯНИИ ВИТАМИНИЗИРОВАННОЙ ДИЛИЖАНСКОЙ МИНЕРАЛЬНОЙ ВОДЫ НА ДИНАМИКУ ВОССТАНОВЛЕНИЯ НЕКОТОРЫХ СОСТАВНЫХ ЧАСТЕЙ КРОВИ АНЕМИЗИРОВАННЫХ КРОЛИКОВ

(Сообщение 1)

Одним из лучших средств бальнеотерапии являются минеральные воды. Среди последних особое место занимают железистые минеральные воды.

По поводу действия железистых препаратов имеются различные мнения: одни исследователи считают, что эффект их действия не зависит от химической структуры железа, другие придерживаются мнения, что терапевтический эффект железистых препаратов обуславливается исключительно наличием двухвалентного железа. Мы на основе своих экспериментов разделяем второе мнение.

Железо служит материалом для образования гемоглобина, для транспорта кислорода, оказывает стимулирующее действие на гемопоэтическую систему, являясь катализатором, ускоряет обмен веществ и т. д.

Железо в свежей минеральной воде находится в закисной, биологически активной форме, поэтому многие фармакологи утверждают, что идеальная форма терапевтического железа— это железистые воды (Александров). Применение железистых минеральных вод для лечения различных форм анемий практикуется давно. Минеральная вода курорта «Гай» обладает способностью стимулировать регинерацию красной крови (Вольский, Шевелева). Подобным же действием обладает же-

лезисто-мышьяковистые воды Зуби, дарыдагская вода (Караев, Гусейнов) и др.

В Армении также имеется ряд железистых источников. Из них отличаются большим содержанием железа «Дилижан» и источники бассейна реки Мармарык, в частности «Анкаван».

Естественная «живая» (по Александрову) минеральная вода при хранении теряет некоторые свойства. Так, например, в углекислых гидрокарбонатных источниках, к которым относится дилижанская минеральная вода, двухвалентный ион железа при хранении превращается в трехвалентный, который выпадает в виде желтовато-коричневого осадка.

Однако, изучая курортные ресурсы, «...нельзя довольствоваться свойствами, присущими тем или иным лечебным водам или грязям, необходимо научиться изменять их свойства в нужном для практики направлении» (Центральный институт курортологии, 1951 г.). В соответствии с этим при лечении животных с экспериментальной анемией нами использовалась дилижанская минеральная вода со стабилизированным железом. Стабилизация производилась методом Акопян, Аветян, сущность которого заключается в образовании соединения ферроаскорбина в минеральной воде, прибавлением к ней витамина «С».

Целью нашей работы явилось изучение динамики восстановления некоторых составных частей крови (в данном сообщении эритроцитов, лейкоцитов и гемоглобина) у животных с острой постгеморрагической анемией при последующем лечении витаминизированной дилижанской минеральной водой.

Методика

Опыты ставились на 23 кроликах. После предварительного определения вышеуказанных ингридиентов в норме, путем выпускания из a. femoralis до 40% циркулирующей крови, у подопытных кроликов вызвали экспериментальную острую постгеморрагическую анемию. Через 24 часа после кровопускания и в последующие дни, пипеткой per os, из расчета 20 мл на кг живого веса, вводилась животным I группы (контрольной— 7 кроликов) ереванская водопроводная вода, II группы (5 кроликов)—натуральная бутылочная дилижанская мине-

ральная вода, где железо находилось в инактивной форме, в осадке, и животным III группы (11 кроликов) вводили витаминизированную дилижанскую минеральную воду. Одновременно в течение 20-и дней, через каждые 5 дней производили вышеуказанные исследования.

Обсуждение полученных результатов

Гемоглобин

Из таблиц 1, 2 можно видеть, что у животных III группы уже после 15-кратного поения количество гемоглобина доходит до 92,5% по сравнению с нормой, а к 20-му дню достигает



— — — (I группа)
— . — . — (II группа)
———— (III группа)

1. Динамика восстановления эритроцитов

Таблица 1

Средние данные опытов по изучению динамики восстановления некоторых ингридиентов крови анемизированных кроликов при лечении натуральной и витаминизированной дилижанской минеральной водой

Порядок действий	Гемоглобин (по Сали)			Эритроциты			Лейкоциты		
	контроль	натуральн. (бутылочная) дилиж. мин. вода	витаминизир. дилижан. минеральная вода	контроль	натуральн. (бутылочная) дилижан. мин. вода	витаминиз. дилижан. минеральн. вода	контроль	натуральн. (бутылочн.) дилижан. мин. вода	витаминиз. дилижан. мин. вода
В норме	64,8	66,4	68,1	4330000	4.4000000	4.628000	8.450	9.000	9 000
Через 24 ч. после кровопускания	42,4	42,0	43,5	2.938000	3.000000	3.[illegible]08000	12.[illegible]0[illegible]	13.3[illegible]0	13.300
После 5-кратного поения	44,7	42,4	52	2.8330000	3.120[illegible]0	3.805000	12.900	12.300	10.[illegible]00
После 10-кратного поения	46,5	46,4	58,7	3.3150000	3.780000	4.191000	1[illegible].380	11.400	11.700
После 15-кратного поения	50,2	49,0	63	3.473000	3 920000	4.840000	10.900	11.500	9.800
После 20-кратного поения	54,0	54,3	67	3,761000	4.180000	5.137000	8.700	9.100	9.900

Таблица 2

Данные таблицы 1, выраженные в процентах к норме

Порядок действий	Гемоглоб.(по Сали)			Эритроциты			Лейкоциты		
	контроль	натуральн. (бутылочная) дилижан. мин. вода	витаминизир. дилижан, минеральная вода	контроль	натуральн. (бутылочная) дилижан. мин. вода	витамин. дилижан. минеральн. вода	контроль	натуральн. (бутылочная) дилижан. мин. вода	витаминиз. дилижан. мин. вода
В норме	100	100	100	100	100	100	100	100	100
Через 24 ч. после кровопускания	65	63,0	63,8	67,9	68,0	64,5	144	147	146
После 5-кратного поения	68,9	63,0	76,3	65,7	70,9	82,2	153	136	121
После 10-кратного поения	71,8	69,8	87,2	76,5	85,9	95,9	163	126	130
После 15-кратного поения	77,5	73,8	92,5	77,8	89,0	104	129	127	109
После 20-кратного поения	82	81,7	99,1	86,9	95,0	110	102,9	101	110

нормы, тогда как у животных I и II группы количество гемоглобина находится все еще на низком уровне. Эти данные позволяют предполагать, что в витаминизированной минеральной воде железо, находясь в закисной биологически активной форме, лучше всасываясь, способствует более быстрому восстановлению гемоглобина. Кроме железа восстановлению гемоглобина, повидимому, частично способствует и аскорбиновая кислота, входящая в состав этой воды, которая является стабилизатором железа и регулятором обмена тканевого железа в направлении ускорения перевода железа из окисной в закисную форму.

Эритроциты

У животных III группы восстановление количества эритроцитов происходит более интенсивно. Так, уже после десятикратного поения оно доходит до 95,5%, после 15-кратного



— — — (I группа)
—.—.— (II группа)
———— (III группа)

2. Динамика восстановления гемоглобина.

поения превосходит норму (104%), а на 20-й день достигает 110%, тогда как у животных I и II групп на 20-й день достигает 86,9 (I гр.) 95,0% (II гр.).

Относительно раннее восстановление количества эритроцитов у животных II группы мы склонны объяснить стимулирующим действием остальных составных частей натуральной дилижанской минеральной воды.

Лейкоциты

Сильный лейкоцитоз, вызванный кровопусканием, постепенно нормализуется, кроме животных III группы, у которых количество лейкоцитов к 20-му дню достигает 110%, что, повидимому, объясняется стимулирующим действием витаминизированной минеральной дилижанской воды на лейкопоэз.

Выводы

1. Экспериментальная анемия, вызванная выпусканием до 40% циркулирующей крови, приводит к резкому снижению количества гемоглобина и эритроцитов, которые остаются на низком уровне к 20-му дню после кровопускания.

2. Введение витаминизированной дилижанской минеральной воды животным с острой постгеморрагической анемией сопровождается полным восстановлением гемоглобина после 20-кратного поения данной водой.

3. При введени ивитаминизированной дилижанской минеральной воды анемизированным животным количество эритроцитов превосходит норму уже после 15-кратного поения.

4. Лейкоцитоз, вызванный кровопусканием, нормализуется к 15-му дню поения витаминизированной дилижанской минеральной водой, однако некоторое превосходство исходного количества объясняется, повидимому, гематогенным действием этой воды.

Кафедра физиологии человека и животных

ЛИТЕРАТУРА

1. Акопян С. А.—К вопросу о степени насыщенности витаминами „C" и „B_1" у здоровых людей. Научные труды Ереванского гос. университета, т. XXXII, 1951.
2. Акопян С. А., Аветян С. Г.— Новый метод предотвращения образования осадков в железосодержащих минеральных водах (витаминизированная минеральная вода). Научные труды Ереванского гос. университета, том 40 (серия биологич. наук, выпуск IV), 1953.
3. Александров В. А.—О железистых водах в дарьинском источнике, в частности „Вопросы курортологии" № 1, 1937.
4. Александров В. А.—Основы курортологии, том I, 1934.
5. Волынская М. Б.—Фармакологическое и клиническое исследование препаратов железа в сочетании с аскорбиновой кислотой. „Фармакология и токсикология", 1946.
6. Вольский Е. М. и Шевелева—Изменения красной крови под влиянием минеральной воды курорта „Гай". „Вопросы курортологии" № 1, 1937.
7. Гусейнов Г.—Изменения морфологического состава крови у нормальных и предварительно анемизированных животных при действии на них дарыдагской мышьяковистой воды и раствора мышьяка (автореферат), Баку, 1951.
8. Френкель Р. Н., Житомирская Б. М.—К вопросу о сохранении железа в бутылочной воде железистых минеральных вод. „Вопросы курортологии" № 4, 1937.

Ս. Գ. Ավետյան

ԱՆԵՄԻԶԱՑՎԱԾ ՃԱԳԱՐՆԵՐԻ ԱՐՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՂԱԴՐԻՉ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՎՐԱ ՎԻՏԱՄԻՆԱՑՎԱԾ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

(1-ին հաղորդում)

Ամփոփում

Ներկա աշխատանքի նպատակն է եղել ուսումնասիրել սուր պոստհեմոռագիկ անեմիա առաջացրած կենդանիների մոտ վիտամինացված Դիլիջանի հանքային ջրի ազդեցությունը նրանց արյան վերականգնման դինամիկայի վրա։

Փորձերի ստացված տվյալներից կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին։

1. Շրջանառության մեջ գտնվող արյան 40 %-ի թողարկման հետևանքով առաջացված անեմիան առաջ է բերում հեմոգլոբինի և էրիտրոցիտների քանակի խիստ իջեցում, որը թողարկումից քսան օր հետո մնում է ցածր մակարդակի վրա։

2. Սուր պոստհեմոռագիկ անեմիա առաջացրած կենդանիներին 20 անգամ վիտամինացված Դիլիջան հանքային ջուր խմեցնելուց հետո հեմոգլոբինի քանակը հասնում է նորմայլին։

3. Անեմիզացիայի ենթարկված կենդանիներին 15 անգամ վիտամինացված Դիլիջան հանքային ջուր խմեցնելուց հետո էրիտրոցիտների քանակը գերազանցում է նորմային։

4. Արյուն թողնելու հետևանքով առաջացած լեյկոցիտոզը վերանում է վիտամինացված Դիլիջան հանքային ջուր տալուց 15 օր հետո, սակայն լեյկոցիտների որոշ գերազանցումը սկզբնական քանակից, ըստ երևույթին, պետք է բացատրել այդ ջրի հեմատոգեն ազդեցությամբ։

Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոն

Վ. Մ. Մոլոտովի անվան Երևանի պետ. համալսարանի գիտ. աշխատություններ
Научные труды Ереванского государственного университета им. В. М. Молотова
49 1955

Е. Е. Тамразян

ИЗМЕНЧИВОСТЬ ОРГАНОВ ПЛОДОНОШЕНИЯ ГИБРИДНЫХ СЕЯНЦЕВ ВИНОГРАДА

(Руководитель—доктор сельскохозяйственных наук С. А. Погосян)

У гибридов винограда, полученных от различных родительских форм (местных сортов с привозными, местных с мичуринскими и с другими зимостойкими формами), в первом потомстве сеянцы проявляют большое разнообразие. Это выражается в изменчивости строения листьев по ярусам от дикого до культурного состояния, в изменении размера и формы гроздей и ягод, количества семян в ягоде, содержания сахара и кислотности в ягодах и в других признаках и свойствах, развивающихся в процессе их индивидуального развития (5).

Для изучения характера изменчивости органов плодоношения сеянцев винограда, как в потомстве комбинации скрещивания, так и в индивидуальном развитии каждого из них, селекционный фонд сектора селекции Института виноградарства и виноделия Армянской ССР выделил нам 450 сеянцев следующих комбинаций:

1. Амбари×Арарати,
2. Амбари×Саперави,
3. Амбари×Мичурина № 135,
4. Кармир Кахани×Еревани розовый,
5. Мсхали×Мускат белый.

В первых трех комбинациях одна и та же материнская форма была скрещена с различными отцовскими формами. Две следующие комбинации были отобраны по отдаленности происхождения родительских пар.

Гибридизация между сортами Амбари×Арарати, Амбари (Шафеи) Арарати (Ачабаш) была произведена с целью получения более крупноягодного и крупногроздного столового сорта с обоеполыми цветками, который отличался бы не только красотой гроздьев, ягод, приятными органолептическими свойствами, но и лежкостью и транспортабельностью.

Скрещивание *Кармир Кахани×Еревани розовый* проводилось с целью выведения нового изюмного и столового сорта с партенокарпическим завязыванием крупных ягод, с приятным сочетанием сахара и кислотности.

При скрещиваний *Амбари×Саперави* стремились получить ценный сорт винного направления.

В потомстве столового сорта Амбари наблюдались сеянцы с различным сочетанием кислотности и сахара. Эго явление дает возможность при скрещивании с хорошим сортом Саперави получить сеянцы с желаемым сочетанием кислотности и сахаристости. Скрещивая *Мсхали* с *Мускатом белым*, стремились получить урожайный универсальный сорт с мускатным ароматом, не дающим горошение, что свойственно Мсхали.

Сорт Мичурина № 135 в условиях Армении—раннеспелый и морозоустойчивый. Амбари—позднеспелый и слабоморозостойкий сорт. Скрещивание этих двух резко различных родительских пар может привести к еще большему разнообразию гибридного потомства, следовательно и к большей возможности отбора из них раннеспелых и более качественных форм, чем отцовская форма сеянцев с повышенной морозоустойчивостью.

Изучение указанного материала показало, что у винограда в гибридном потомстве и в индивидуальном развитии сеянцев развивается большая изменчивость по многим свойствам и признакам (6).

1. Изменчивость по типу цветка

У виноградного растения, как известно, имеется три типа цветка: обоеполый, функционально женский и функционально мужской. Последний развивается у диких форм и у гибридов, полученных от культурных и диких форм.

Уклонение гибридных сеянцев в сторону того или другого родителя, повидимому, зависит от силы проявления наслед-

ственных свойств в зависимости от условий среды. Известно, что пол считается наиболее константным, не поддающимся изменению свойством.

Однако у гибридных сеянцев винограда хотя и редко, но наблюдалось резко выраженное изменение этого признака в процессе индивидуального развития сеянца.

Опыты С. С. Хачатрян (8) показали возможность изменения пола путем усиления питания в период цветения этих сеянцев, что способствовало развитию пестика и привело бы к образованию ягод и семян у мужских цветков, наподобие обоеполых сеянцев.

Как исходные формы, так и гибридные сеянцы винограда различаются между собой не только по типу цветка (полу), но и по морфологическим особенностям репродуктивных органов.

Фото 1.

Цветки сеянцев комбинации Амбари × Арарати. Изменчивость репродуктивных органов в пределах одного куста (2 ряд).

Изменчивость репродуктивных органов в пределах потомства (3 ряд).

В репродуктивных органах изучаемых гибридных комбинаций произошли изменения, причем эта изменчивость выразилась не только в пределах потомства, но и в пределах куста, т. е. в индивидуальном развитии сеянцев (смотри фото 1).

Рассматривая строение завязей и тычинок у сеянцев гибридной комбинации Амбари×Арарати, можно увидеть изменчивость в их строении. По этому свойству эти сеянцы уклонились в стороны обоих родителей. Например, у сеянцев 2, 6, 34 этой комбинации кувшинчатая форма завязи и продольная бороздка с противоположной стороны, продолжающаяся до рыльца, заимствована у сорта Арарати. Сеянец № 38 имеет завязь грушевидную, которая всецело уклонилась в сторону Амбари. Закрученные тычинки, свисающие при засыхании, плотно охватывают чашечку. Высота их —до края рыльца.

Почти такая же изменчивость формы репродуктивных органов наблюдалась и у сеянцев гибридных комбинаций: Меха-

Фото 2.

Цветки сеянцев комбинации Амбари × Мичурина № 135.

Сеянцы, развившие большое разнообразие в пределах индивидуального развития (2 ряд), в пределах потомства гибридной комбинации (3 ряд)

ли×Мускат белый, Кармир Кахани×Ереванн розовый, Амбари×Саперави.

Наибольшую изменчивость в строении репродуктивных органов развили сеянцы комбинации Амбари×Мичурина № 135, так как их наследственность была более расшатана вследствие скрещивания более отдаленных родительских пар (фото 2).

II. Изменчивость по форме, величине, окраске ягод и количеству семян в них

В период плодоношения у сеянцев гибридов наблюдалось разнообразие по форме, величине гроздей и ягод, по окраске и количеству семян в ягодах.

Фото 3.
Разнообразие по форме и величине ягод у гибридных сеянцев Мсхали × Мускат белый

В комбинации Мсхали×Мускат белый (фото 3) из двух родительских пар, которые имели круглые ягоды, в потомстве развились сеянцы большей частью с продолговатыми и менее круглыми ягодами.

Это явление наблюдалось у сеянцев всех нами взятых гибридных комбинаций не только в форме ягод, но и в их окраске (фото 4).

Фото 4.

Разнообразие по форме, величине и окраске ягод у гибридных сеянцев Кармир Кахани × Ереваии розовый

Фото 5.

Разнообразие в форме и величине семян в пределах потомства гибридных комбинаций Кармир Кахани × Еревани розовый и Амбари × Саперави

У гибридных сеянцев в период плодоношения наблюдалось большое разнообразие в форме, величине и в количестве семян в ягоде.

